# Քրիստոնյա Հայաստան

2009, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (301)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էռնեկյան» հանրակրթական դպրոցը

Սեպտեմբերի 12-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ ազգային բարերար Էդուարդո Էռնեկյանը կատարեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էռնեկյան» հանրակրթական դպրոցի հանդիսավոր բացումը:

ՀՀ կառավարության օգոստոսի 20-ի որոշմամբ Էջմիածնի թիվ 13 դպրոցը հանձնվել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին եւ վերակոչվել «Էռնեկյան»՝ ի հիշատակ ազգային բարերար Էդուարդո Էռնեկյանի հանգուցյալ ծնողների՝ Փանոս Էռնեկյանի եւ Սուրբինա Բագրատունու:



Վեհափառ Հայրապետին եւ պատվարժան հյուրերին մեծ խանդավառությամբ, բուռն ծափողջույններով եւ ավանդական աղ ու հացով դիմավորեցին դպրոցի սաներն ու ուսուցիչները:

Բացման խոսքով հանդես եկավ Մայր Աթոռի քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Վարդան աբեղա Նավասարդյանը՝ անդրադառնալով պատմական այս իրադարձության կարեւորությանը, որով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին շարունակում է կրթական ասպարեզում դարավոր իր առաքելությունը: Հայր սուրբն իր երախտագիտությունը հայտնեց հայրենի իշխանություններին՝ ցուցաբերած աջակցության համար, ինչպես նաեւ մեծանուն բարերարին, ում ազնիվ աջակցությամբ կգործի այս դպրոցը:

Դպրոցի տնօրեն Սահակ Զաքարյանի բարիգալստյան խոսքից հետո ներկաներին իրենց սրտի խոսքն ուղղեցին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ ՀՀ կրթության եւ գիտության նախարարի խորհրդական Միեր Ղազարյանը:

Այնուհետեւ, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց դպրոցի օրհնության արարողությունը, որի ավարտին ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնության ներքո գործող կրթական այս հաստատությունում դպրոցի սաները պիտի դաստիարակվեն ազգային արժեքներով եւ հայրենյաց սիրով, զինվեն անհրաժեշտ գիտելիքներով եւ հմտություններով, որպեսզի հաստատուն քայլեն կյանքում եւ իրենց բարի ծառայությունը բերեն ժողովրդին, հայրենիքին եւ Եկեղեցուն: Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց դպրոցի բարերար Էդուարդո Էռնեկյանին՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության իրականացման գործում զորակցման համար: Նորին Սրբությունը մասնավոր իր գնահատանքը հայտնեց նաեւ Արմավիրի մարզպետին եւ ՀՀ կրթության ու գիտության նախարարին:

*«Սիրելի՛ սաներ, վստահ ենք, որ նոր խանդավառությամբ պիտի ուսանեք այս հաստատության հարկի ներքո՝ գիտակցելով, որ դուք այլեւս բարի անվան պահպանողներն եք Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Վստահ ենք, որ գիտակցելով այն, որ դպրոցը գործում է Մայր Աթոռի օրհնության եւ հովանավորության ներքո, առավել նախանձախնդրությամբ պիտի կատարեք հանձնարարությունները մանկավարժների, սնեք ձեր հոգին մշտական հաղորդակցությամբ մեր հայրերի պատվիրանների ու պատգամների եւ ձեր կյանքը կազմակերպեք՝ առաջնորդվելով դրանցով»*,- նշեց Հայոց Հայրապետն իր խոսքում:

Վերջում Նորին Սրբությունը եւ բարերար Էդուարդո Էռնեկյանը գրքեր նվիրեցին առաջին լսարանի սաներին, ապա արարողության մասնակիցները շրջեցին դպրոցում՝ ծանոթանալով պայմաններին:

Դպրոցի բացմանը ներկա էին Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանը, Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը, ԱԺ պատգամավոր Անահիտ Բախշյանը, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներ, Արմավիրի թեմի առաջնորդ Սիոն եպս Ադամյանը, Մայր Աթոռի դիվանապետ Արշակ եպս Խաչատրյանը, Մայր Աթոռի լուսարարապետ Արարատ եպս Գալթագճյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ եւ հյուրեր:



## ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայկական տպագրության հիմնադրման 500-ամյակի առիթով, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, մասնակցությամբ ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի եւ ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի, օգոստոսի 25-27-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տեղի ունեցավ հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարը:

ԱՄՆ հայոց Արեւելյան թեմի «Գրիգոր եւ Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնի նախաձեռնությամբ հրավիրված համաժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Գարեգին Ա» հայագիտական-աստվածաբանական կենտրոնի, Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ազգային գրադարանի, Հայաստանի ազգային արխիվի, ՀՀ ԳԱԱ-ի հիմնարար գրադարանի, ԵՊՀ-ի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական գրադարանների, Հայաստանի ամերիկյան համալսարանի, Եղիշե Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանի հայագիտական, Ավետիք Իսահակյանի անվան կենտրոնական, Հանրապետական գիտաբժշկական, Հայաստանի Խնկո-Ապոր անվան ազգային մանկական, Հայաստանի ազգային գրապալատի, երաժշտագիտական, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Վայոց ձորի, Տավուշի, Սյունիքի, Արագածոտնի մարզային գրադարանների, ՀՀ-ում ԱՄՆ-ի դեսպանատան, ՀՀ մշակութային արժեքների պահպանության գործակալության աշխատակիցները, ինչպես նաեւ ներկայացուցիչներ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունից, Երուսաղեմի Հայոց Պատրիարքությունից, Կ.Պոլսի Հայոց Պատրիարքությունից, Զմմառի Հայ Կաթողիկե արծիվյան միաբանությունից, Վենետիկի Մխիթարյան միաբանությունից, Վիեննայի Մխիթարյան միաբանությունից, Ամերիկայի Միացյալ Նահանգներից Հարվարդի, Միչիգանի, Կալիֆոռնիայի համալսարաններից, «Գրիգոր եւ Կլարա Զոհրապ» տեղեկատվական կենտրոնից, Ամերիկայի հայկական գրադարանից եւ թանգարանից, Հայկական հետազոտությունների ազգային ընկերակցությունից, Հայկական մշակութային միությունից, Ս. Ներսես ճեմարանից, Ռուսաստանի ազգային գրադարանից, Ֆրանսիայի ազգային գրադարանից, ՀԲԸՄ Նուբարյան գրադարանից (Ֆրանսիա), Բրիտանական գրադարանից (Մեծ Բրիտանիա):



Եռօրյա քննարկումների ընթացքում լսվեցին մասնակից գրադարանների ու հաստատությունների հաղորդումները եւ տասներկու թեմատիկ զեկուցում: Քննարկվեց հարցերի լայն շրջանակ, այդ թվում՝ տեղեկատվության եւ նյութերի փոխանակության, գրադարանների հավաքածուների էլեկտրոնային քարտագրման, թվայնացման եւ պահպանման, հայաստանյան գրադարանների ներկա վիճակի, հայագիտական գրադարանների միջեւ համագործակցության վերաբերյալ եւ այլ հիմնախնդիրներ:

Օգոստոսի 26-ին ՀՀ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հրավերով տեղի ունեցավ գործնական հանդիպում համագումարին մասնակից՝ Սփյուռքում գործող գրադարանների եւ հաստատությունների հետ:

Համագումարն ընդունեց բանաձեւ եւ ձեւավորեց աշխատանքային խումբ, որը պիտի զբաղվի համապատասխան ինտերնետային կայքի ստեղծմամբ՝ ապահովելու համար հայերեն եւ օտարալեզու հայագիտական գրականության մասին տեղեկատվությունը Հայաստանից եւ արտերկրից:

Համագումարի մասնակից գրադարանները եւ հաստատությունները մինչեւ 2012 թ. ծրագրում են անցկացնել բազմապիսի միջոցառումներ ինչպես մայր հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում՝ ի նշանավորումն հայկական տպագրության հիմնադրման 500-ամյա հոբելյանի:

***Հայկական գրադարանների միջազգային առաջին համագումարի պատվիրակներ***

## ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Բացվեց Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2009-2010 ուսումնական տարին

Սեպտեմբերի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2009-2010 թթ. ուսումնական տարվա բացման արարողությունը, որին մասնակցում էին ճեմարանականները, Մայր Աթոռի միաբանները, դասախոսներն ու ծնողները:



Հանդիսությանը բացման խոսքով հանդես եկավ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի փոխտեսուչ Դավիթ աբեղա Քարամյանը՝ անդրադառնալով ճեմարանի ընդհանուր վիճակագրությանը: Հայր սուրբն ուրախությամբ նշեց, որ այս տարի ճեմարան է ընդունվել 31 սան, համալրվել է տեսչական եւ դասախոսական կազմը:



Ճեմարանում այժմ ուսանում է 123 սան:

Այնուհետեւ հոգեւոր եւ ժողովրդական երգերի կատարումներով եւ ասմունքով հանդես եկան ճեմարանականները:

Վերջում ներկաներին իր գնահատանքն ու օրհնությունը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ուրախությամբ արձանագրեց, որ այժմ ճեմարանը համալրվել է հոգեւորական դասախոսներով, ովքեր, իրենց աստվածաբանական բարձրագույն ուսումն ավարտելով Եվրոպայի եւ Միացյալ Նահանգների տարբեր կրթական հաստատություններում, վերադարձել են Մայր Աթոռ եւ իրենց ծառայությունն են բերում Հայոց Եկեղեցուն եւ մասնավորապես ճեմարանին:

Իր պատգամում Վեհափառ Հայրապետն անդրադարձավ եկեղեցականի կերպարին՝ ժողովրդին, Եկեղեցուն եւ հայրենիքին հոգեւորականի արդյունավոր ծառայության մեջ կարեւոր նկատելով պատասխանատվությունը, նվիրումն ու բարոյական նկարագիրը: «Այդ գաղափարները կարող են կյանքի կոչվել, երբ մենք ունենք սեր մեր կոչումի եւ ծառայության նկատմամբ եւ հավատ՝ տեսնելու մեր առաքելության ուղին, այն նպատակը, որին ձգտում ենք հասնել, որի իրականացման համար ջանք, եռանդ եւ նվիրում ենք գործադրում»,- նշեց Վեհափառ Հայրապետն իր խոսքում՝ հորդորելով ճեմարանականներին առավել նախանձախնդրությամբ, հետեւողականությամբ եւ բարձր գիտակցությամբ լծվել ուսումնառության սրբազան գործին:

# Սուրբ պատարագն աշակերտի շուրթերով

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ եւ ՀՀ Կրթության ու գիտության նախարար Արմեն Աշոտյանի աջակցությամբ՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոնը ՀՀ հանրակրթական բոլոր դպրոցներում նախաձեռնել է «Սուրբ պատարագն աշակերտի շուրթերով» ծրագիրը:

Ծրագիրը, որի նպատակն է աշակերտներին հաղորդ դարձնել պատարագի խորհրդին եւ երգեցողությանը, իրականացվելու է երեք փուլով՝ տարածաշրջանային, մարզային եւ հանրապետական:

Հայոց Եկեղեցու թեմերի, տեղական ինքնակառավարման մարմինների կրթության բաժինների եւ նրանց կողմից լիազորված անձանցից ձեւավորված տարածաշրջանային հանձնախմբերը, մասնակցելով միջոցառումներին, տարածաշրջանից ընտրելու են լավագույն դպրոցը: Հաղթող ճանաչված դպրոցները մասնակցելու են մարզային, ապա հանրապետական փուլին՝ եզրափակիչ եռօրյա մրցույթ-փառատոնին, որն անցկացվելու է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Եզրափակիչ փուլի ավարտին ընտրվելու են հաղթողներ «Լավագույն սցենար», «Լավագույն կատարում», «Լավագույն բեմադրություն» անվանակարգերում, իսկ գլխավոր՝ «Հայրապետական մրցանակը» շնորհվելու է լավագույն միջոցառում ներկայացրած դպրոցին:

*Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի քրիստոնեական դաստիարակության կենտրոն*

# 17-րդ միջազգային էկումենիկ համագումար Իտալիայում

Սեպտեմբերի 9-12-ը Բոզեի վանքում (Իտալիա) տեղի ունեցավ 17-րդ միջազգային էկումենիկ համագումարը՝ «Հոգեւոր բախում ուղղափառ ավանդության շրջանակներում» թեմայով: Համագումարը կազմակերպել էր Բոզեի վանքը՝ Ուղղափառ եկեղեցիների հետ համագործակցությամբ:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցեց Ադամ քհն. Մակարյանը, որը թեմայի շրջանակներում հանդես եկավ բանախոսությամբ եւ ընթերցեց Վեհափառ Հայրապետի ուղերձը համագումարի մասնակիցներին:

*Լրատվական բոլոր նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

# ՍՐԲԱԿԵՆՑԱՂ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԵ ՏԱՃԱՐԸ

**Եղիա աբեղա ԽԱՉԱՏՐՅԱՆԻ անդրանիկ քարոզը՝ խոսված Երեւանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում՝ Աստվածամոր գոտու գյուտի տոնին**

***30 օգոստոսի, 2009 թ.***

*«Աստուածածին սիւն լուսոյ ամպ հովանաւոր եւ բնակարան Բանին, որ բանիւ հովուէր զԻսրայէլ. բարեխօսեա նմա վասն անձանց մերոց»*
***(Շարակնոց)***

Սիրելի՛ հավատավոր եւ բարեպաշտ ժողովուրդ,

Առաքելական մեր Մայր Եկեղեցու տոնացույցի համաձայն՝ այսօր Աստվածամոր գոտու գյուտի տոնն է: Ինչպես գիտեք, Հայոց Եկեղեցին սբ Կույս Մարիամին նվիրված յոթ տոն ունի. Ս. Աստվածածնի հղությունն Աննայից, Տիրամոր ծնունդը, Տաճարին ընծայումը, Ավետումը, Վերափոխումը եւ նրա Տուփի ու Գոտու գյուտը: Վերջինիս հետ կապված՝ մեզ են հասել պատմական չափազանց սուղ տեղեկություններ, որոնք ի մի բերելով՝ ունենում ենք տոնի ամփոփ պատկերը:

Արկադիոս կայսեր գահակալության շրջանում՝ 395-408 թթ., Երուսաղեմում գտնվում է Աստվածամոր գոտին, որը մեծ հարգանքով եւ հատուկ ուշադրությամբ տարվում է Կ. Պոլիս: Տեղի հավատացյալները, իմանալով այս դեպքի մասին, երկյուղալից սրտով ընդառաջ են գնում եւ խորին ակնածանքով այն դնում եկեղեցում: Այդ հիշարժան իրադարձության առիթով հետագայում հույները սբ Կույսի անունով կառուցում են մի նոր եկեղեցի եւ գոտին զետեղում այնտեղ՝ ի մխիթարություն քրիստոնյա հավատացյալների:

Այսօրվա տոնի խորհրդով կցանկանայի անդրադառնալ նաեւ սբ Մարիամ Աստվածածնի կյանքի կարեւորագույն մի քանի դրվագների՝ ներկայացնելով նրա կերպարը՝ իբրեւ ճշմարիտ օրինակ մայրության եւ կուսության: Տիրամայրն ավետարանական մի քանի պատմություններում է միայն հիշատակվում:



Նրա կյանքի նկարագրությունը մեզ հիմնականում հասել է եկեղեցու սրբազան ավանդությամբ:

Սբ Մարիամը Հովակիմի եւ Աննայի դուստրն էր՝ թագավորական ցեղից, հոր կողմից՝ Դավթի ազգից, իսկ մոր կողմից՝ Ղեւիի քահանայական տնից: Նա ամլության ծնունդ էր եւ իր ծնողներին տրված ավետիսի զավակը: Նրանք սբ Կույսին երեք տարեկան հասակում ընծայում են Աստծո տաճարին, ուր նա անբիծ աղավնու պես մնում է մինչեւ տասնչորս տարեկանը: Այդժամ քահանաները նրան հանձնում են պարկեշտ ու բարեպաշտ Հովսեփի խնամքին: Երեք ամիս անց Նազարեթում՝ Հովսեփի տանը, Գաբրիել հրեշտակապետը ողջույն է տալիս Տիրուհուն, ով տասնհինգ տարեկանում Ս. Հոգով ծնում է աշխարհի Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին, եւ երեսուներեք տարի մնում իր Որդու հետ: Դեռեւս Հովսեփի կենդանության օրոք նրա իսկ հանձնարարությամբ սրբուհուն սպասավորում էր Հակոբոս Արդարը, ով նաեւ Հովսեփի համար էր ծառայաբար հոգ տանում: Սակայն Տիրոջ խաչելության ժամին Աստվածամոր խնամքը հանձնվում է Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսին: Այդ ժամանակ սբ Մարիամը քառասունութ տարեկան էր եւ Քրիստոսի համբարձումից հետո ապրեց եւս տասներկու տարի:

Երանելի Կույսն այդ օրերին բնակվում էր Երուսաղեմում՝ իր ծնողների տանը, ուր նրան



ծառայում էր սբ Հովհաննես առաքյալը: Տիրուհին լուռ նստում էր տանը՝ անդադար աղոթելով ու վարժվելով զանազան ճգնությունների մեջ: Նա սքանչելի վարք ուներ՝ իր հոգու եւ մարմնի անարատությամբ գերազանցելով բոլոր ժամանակների սրբերին: Աստվածածինն իր հրեշտակային տեսքով, անխախտելի կուսությամբ եւ դեմքի անբացատրելի գեղեցկությամբ հայտնապես ճանաչվում էր ամենքի կողմից՝ որպես ճշմարիտ մայր Էմմանուելի: Նրա ապրած ամբողջ կյանքը տեւում է վաթսուն տարի: Այստեղից հավատացյալների մեջ սահմանված է, որ տղամարդն ամեն օր երեսունվեց երկրպագություն անի ծնրադրությամբ՝ ի փառս Քրիստոսի (երեսուներեքը՝ ըստ Փրկչի երկրային կյանքի տեւողության, եւ երեքը՝ ի փառս Ս. Երրորդության), իսկ կինը՝ վաթսուն՝ ի պատիվ եւ ի բարեխոսություն սբ Մարիամի, որ վաթսուն տարի ապրելով աշխարհում՝ հոգով եւ մարմնով վերափոխվեց դեպի գերաշխարհայինների կայանը՝ իր միածին Որդու եւ մեր Աստծո արքայությունը:

Արդարեւ, Աստվածամայրը քրիստոնյաների համար հարյուրամյակներ շարունակ եղել է եւ է գերագույն պատկառանքի արժանի բացառիկ մի անձ: Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին եւս հնուց ի վեր ամենօրյա իր աստվածապաշտական արարողություններում մեծ տեղ է հատկացրել Տիրամորը: Բավական է նշել, որ հոգեպարար մեր շարականների մի զգալի մասը նվիրված է սբ Աստվածածնին: Նրա անունով են նաեւ կոչվում հայկական վանքերի ու եկեղեցիների ավագ խորանները, ուր ամեն անգամ հայացք ուղղելիս մեր առջեւ պատկերանում է Աստվածամայրը՝ մանուկ Հիսուսը գրկին:

Ի սկզբանե Աստված Մարիամի մեջ տեսել էր սրբակենցաղ ապրումների մի լուսե տաճար, ուր եւ շուրջ ինն ամիս հաճեց բնակվել Իր թանկագին Որդին:

*Շարունակությունը՝ էջ 5*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ Է ԱՋԱԿԻՐ

## (1474-1484)

Թերեւս Մ. Չամչյանի շփոթի պատճառով է, որ Հովհաննես կաթողիկոսի անունը բացակայում է որոշ ցանկերի մեջ: Իսկ վերջինս Առաքել Դավրիժեցու կողմից 1476 թ. հիշատակված է իբրեւ հայոց կաթողիկոս: Շփոթը կապված է երկու Հովհաննեսների գոյության հետ: Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է Սարգիս կաթողիկոսին, ով իր աթոռակիցն էր դարձրել Հովհաննեսին: Սիմեոն Երեւանցին ժամանակին ուղղել է ցուցակներում տեղ գտած թերությունը: Հավանաբար նա աթոռակցել է Սարգիս Բ Աջատարին 1470-ից եւ միահեծան աթոռակցել 1474-ից:

Այս շրջանում մեծ հաջողության հասած Ուզուն-Հասանը փորձեց նվաճումներ կատարել նաեւ Արեւմուտքում: 1471 թ. նա իր Յուսուֆ զորավարին արշավանքի ուղարկեց դեպի Փոքր Ասիա: Վերջինս օսմանցիներից գրավեց Եվդոկիան կամ Թոքաթը, հետո արշավեց դեպի Քոնիա եւ Ադանա: Սակայն օսմանցիները կարողացան իրենց ուժերը համախմբել եւ ակ-կոյունլուների բանակը ետ մղել, որի ժամանակ Յուսուֆը գերի ընկավ: Օսմանյան բանակները դրանով չբավարարվեցին եւ 1473 թ. արշավեցին արդեն Ուզուն-Հասանի բուն տիրույթների վրա: Տրվեցին մի շարք ճակատամարտեր, որոնց արդյունքում Ուզուն-Հասանը փախուստի դիմեց: Այս ամենի հետեւանքով օսմանցիներին հպատակ հայերի թիվը բավական աճեց: Մեհմեդ Բ-ն, կայսրության շահերից ելնելով, հովանավորում էր Կոստանդնուպոլսի հայերին՝ որպես պետության վստահելի ու շինարար տարրի, ավելի մեծացրեց մայրաքաղաքի հայության թիվը: Օսմանցիները 1475 թ. էլ ճենովացիներից գրավեցին Կաֆան, եւ սուլթանն այնտեղից եւս հայկական մեծ գաղթականություն բերեց Կոստանդնուպոլիս: Կաֆայի հայերը գերակշիռ մասով Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ էին, իսկ ովքեր նրանց փորձում են լոկ հռոմեադավան ներկայացնել, պարզապես կեղծում են, քանզի քաղաքը միայն երկու հայ եպիսկոպոս է ունեցել: Ասենք, որ Մեհմեդ Բ-ին էլ ձեռք չէր տալիս թշնամի ճենովացիների հետ նրան հռոմեադավան հայերին միայն բերել մայրաքաղաք: Գաղթեցվածների մեծ մասը հայադավան հայերի էին, եւ միայն փոքր մասը՝ հռոմեադավան: Հայադավանները Հովակիմ պատրիարքի գլխավորությամբ արդեն հատուկ եւ օրինական դիրք ունեին Կոստանդնուպոլսում, ինչպիսին չունեին հռոմեադավանները: Վերջիններս կարող էին ազատ լինել լատինասիրության մեջ, սակայն կազմում էին հայերի լոկ մի մասը՝ չունենալով ոչ եկեղեցի եւ ոչ էլ այլ հաստատություն: Արագ աճում է Կոստանդնուպոլսի հայկական եկեղեցիների թիվը. Սբ Սարգիս, Սբ Լուսավորիչ, Սբ Նիկողայոս, Սբ Աստվածածին եւ Սբ Գեւորգ: Երեւի հիշյալ շրջանում սկզբնապես կար 6 եկեղեցի:

Ցավոք, Պոլսի հայությունը հատուկ պատմագիր չի ծնել, ուստի աղքատիկ են մեր գիտելիքները Պոլսի պատրիարքության մասին: Արդեն մինչեւ 1461 թ. Հովակիմ պատրիարք դառնալը հայերը զգալի թիվ էին կազմում մայրաքաղաքում: Այլեւայլ քաղաքներից բերված գաղթականությանը շուտով միացան Կաֆայից եւ Կարամանից (1479) բերված հայերը: Կարամանից եկածներին տեղավորեցին Սամաթիայում, որը գտնվում էր քաղաքի հարավարեւմտյան ծովեզրյա շրջանում:





Հովակիմը մահացավ հավանաբար 1477-ին, եւ նրան փոխարինեց Նիկողայոս պատրիարքը, որը սակայն նույնական չէ Անկյուրիայի Նիկողայոս եպիսկոպոսին, որը հիշատակվում է 1486 թ.: Հազիվ թե պատրիարքն ավելի ուշ դառնար Անկյուրիայի եպիսկոպոս: Եթե առաջ Կոստանդնուպոլիսը կապված էր Սսի Աթոռի հետ, ապա աստիճանաբար ուժեղացան Պողոսի դիրքերը, եւ պայմաններ ստեղծվեցին Էջմիածնի Մայր Աթոռի հետ հարաբերություններ հաստատելու համար: Եվ հակառակը. Սսի ազդեցությունը Պոլսում խիստ թուլացավ:

Այս շրջանում գործեց Ամիրդովլաթ Ամասեցի բժշկապետը, որն օսմանյան մայրաքաղաքի առավել կարկառուն դեմքերից էր: Ծագում էր Ամասիա քաղաքից, որդին էր Եղիայի: Հետամուտ լինելով բժշկության՝ նա մեծածավալ նյութեր քաղեց արաբական, պարսկական եւ օսմանյան բժշկարաններից, ինչպես նաեւ նրանց միջոցով միջնորդավորված հունականներից: Չնայած չի բացառվում, որ հունական երկրամասում ապրած եւ լեզուների գիտակ Ամիրդովլաթը դրանք քաղած լինի հենց հունական կամ բյուզանդական բժշկարաններից: Համենայն դեպս, ամասեցի լինելը հավանական է դարձնում նրա հունարենի իմացությունը: Նա գրում է, որ իր աշխատությունն ավարտել է հինգ լեզվով. հայերեն, հոռոմոց լեզու (իմացի՛ր հունարեն), արաբերեն, պարսկերեն, թուրքերեն եւ փոքր չափով՝ լատիներեն: Ամիրդովլաթը հայ բժիշկներից հիշում է Մխիթարին, Ահարոնին, Ստեփանոսին, Ճոսլինին, Սարգսին, Հակոբին, Դեղինին, Սիմավոնին, Վահրամին, որոնք շատ աշխատություններ ունեին, սակայն, ցավոք, բացառությամբ Մխիթար Հերացու աշխատության, մնացածները մեզ չեն հասել: Նա շատ էր ճանապարհորդել եւ մակեդոնացվոց աշխարհում՝ Ֆիլիպպե կամ Ֆիլիպուպոլիս քաղաքում, 1469 թ. գրել է «Օգուտ բժշկութեան» աշխատությունը եւ նոր միայն դրանից հետո հաստատվել էր օսմանյան մայրաքաղաքում: Այստեղ նա 1478 թ. սկսում եւ 1482 թ. ավարտում է «Անգիտաց անպետ»-ը, որ բժշկական բառարան էր եւ որ ավելի ճիշտ է՝ բժշկական հանրագիտարան: Նա մահացավ 1497 թ. դեկտեմբերի 28-ին: Տարիքը հայտնի չէ:

Վրթանես Օձնպեցի եպիսկոպոսը, որ մուղտեսիի կարգավիճակով հաստատվել էր Աղթամարի կաթողիկոսարանում, 7 տարի անց միայն կարողացավ Սբ Լուսավորչի Աջը ձեռք գցել: Նա դժվարություններ շատ կրեց, բայց իր հեզ վարքով կարողացավ սիրելի դառնալ Ստեփանոս կաթողիկոսին եւ նրա կողմից նշանակվել եկեղեցու լուսարար եւ սրբությունների պահապան: Սրբությունների մեջ էր Սբ Լուսավորչի Աջը: Իսկ երբ հարմար պահը եկավ, եւ ջուղայեցի փեռեզակները հայտնվեցին Աղթամարում, նա նրանց մեջ մտերիմ ու վստահելի մարդ գտավ, որի էշի համետի մեջ տեղավորեց Աջը, ուրարը եւ խաչալամը: Այս ձեւով սրբությունները դուրս բերելով կղզուց՝ նա նրան հանձնարարեց շտապով հասնել Ջուղա: Մեկ-երկու օր անց նա եւս ինչ-ինչ պատճառաբանությամբ դուրս եկավ Աղթամարից եւ վերացնելով մուղտեսիի տարբերանշանները՝ ուղեւորվեց Ջուղա: Իսկ երբ նա ուշացավ, ստուգում անցկացվեց, եւ հայտնաբերվեց Աջի կորուստը: Գտնել Հովհաննես Օձնպեցուն չհաջողվեց, իսկ Աջի ձեռք բերելու լուրն ավետաբերները հասցրին Էջմիածին: Աջն ուղարկվեց Նախիջեւան, ուր հասել էին Հովհաննես եւ Սարգիս կաթողիկոսները եկեղեցականների ու աշխարհիկների հետ: Փառավորելով Աջը՝ նրանք այն վերադարձրին Էջմիածին: Աջը վերադարձվեց, հավանաբար, 1474 թ.՝ մինչեւ Սարգիս կաթողիկոսի մահը: Այդպես են կարծում մի շարք ուսումնասիրողներ: Սակայն Մ. Օրմանյանի կարծիքով՝ դա բոլորովին ճիշտ չէ եւ չի համապատասխանում Առաքել Դավրիժեցու տեղեկությանը: Ըստ նրա՝ Աջը վերադարձվել է Հովհաննես եւ Սարգիս կաթողիկոսների օրոք՝ Վրթանես եպիսկոպոսի ձեռքով: Ուստի այն կարող էր կատարվել Հովհաննես կաթողիկոսի եւ նրա աթոռակից Սարգսի օրոք:

Էջմիածնականները հավերժ երախտապարտ մնացին Վրթանես Օձնպեցուն, որի շնորհիվ մեծ սրբությունը վերադարձվել էր Էջմիածին՝ հաստատելով Մայր Աթոռի օրինականությունը: Նրան կաթողիկոսը եւ նրա աթոռակիցը մեծ ընծաներ տվեցին, որին միացվեցին Աջին տրված նվերները եւ խաչահամբույրները: Սխալ կարծիք կա, թե նա դարձել է Հովհաննես կաթողիկոսի աթոռակից, բայց դա չի հաստատվում: Իրականում նա եղել է լուսարարապետ կամ փակակալ: Նա այդ պաշտոնում մնաց բավական երկար եւ պաշտոնից հեռացավ առողջության տկարության պատճառով: Նա քաշվեց Օձնպի Սբ Աստվածածին վանքը, որտեղ էլ մահացավ ու թաղվեց 1493 թ.՝ Աղթամարից հեռանալուց 16 տարի անց: Այլ խոսքով՝ նա Աջը բերել էր 1477 թ.: Նրա հիշատակը չմոռացվեց: Կաթողիկոսներն ամեն տարի Օձնպ էին գնում եւ պատարագ մատուցում նրա հոգու համար եւ հոգեհաց տալիս: Սակայն հետո այդ կարգը սկսեց խախտվել:

Աջը բերվեց Հովհաննես կաթողիկոսի օրոք, որի պատճառով Մ. Օրմանյանը նրան Աջակիր է կոչում: Նա առանձին գործունեությամբ աչքի չի ընկել, կամ էլ այդ մասին հիշատակներ չեն պահպանվել:

*Շարունակությունը՝ էջ 4*

## ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

### Եվրոպական եւ միջինասիական երկրների կրոնական կազմակերպությունների ֆորում Բելառուսում

Օգոստոսի 31-ից սեպտեմբերի 2-ը Մինսկում տեղի ունեցավ եվրոպական եւ միջինասիական երկրների կրոնական կազմակերպությունների ֆորումը՝ նվիրված ազգաբնակչության եւ զարգացման թեմաներին, որի ընթացքում քննարկվեց ընտանեկան խնդիրներին վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Հայ Առաքելական եկեղեցուց ֆորումին մասնակցում էին Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդ Եզրաս եպս Ներսիսյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Մարկոս եպս Հովհաննիսյանը եւ Հայաստանյան կլոր սեղան հիմնադրամի գործադիր տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանը:

Ֆորումի բացման օրը «ՄԱԿ-ի զարգացման հիմնադրամի համագործակցությունը կրոնական կազմակերպությունների հետ» թեմայով բանախոսությամբ հանդես եկավ դոկտ. Կարեն Նազարյանը, իսկ հաջորդ օրը՝ «Կրոնական կազմակերպությունների փորձի փոխանակումը» թեմայով՝ Մարկոս եպս Հովհաննիսյանը:

### Միջեկեղեցական համագումար Լեհաստանում

Սեպտեմբերի 6-ից 8-ը Լեհաստանի Կրակով քաղաքում տեղի ունեցավ Ս. Էջիդիոյի խաղաղարարական միջազգային 22-րդ համագումարը՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմից 70 տարի անց. հավատքներն ու մշակույթները երկխոսության մեջ» թեմայով, որի նպատակն էր երկխոսության կամուրջներ բացել տարբեր կրոնների եւ մշակույթների միջեւ: Համագումարին անդրադարձ կատարվեց նաեւ ժամանակակից աշխարհի մարտահրավերներին:

Հայ Առաքելական Եկեղեցին ներկայացրեց Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ եւ Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Նորվան արք. Զաքարյանը, ով հանդես եկավ նաեւ բանախոսությամբ:

### «Ռենովաբիսի» 13-րդ միջազգային համաժողովը Գերմանիայում

Սեպտեմբերի 3-ից 5-ը Գերմանիայի Ֆրեյզինգ քաղաքում տեղի ունեցավ «Ռենովաբիս» կազմակերպության 13-րդ միջազգային համաժողովը՝ «Փնտրել միություն, պահպանել բազմազանություն. Էկումենիկ երկխոսությունն Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ» թեմայով: «Ռենովաբիսը» բարեգործական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1993 թ. Գերմանիայի Կաթոլիկ Եկեղեցու կողմից: Երկար տարիներ այն համագործակցում է Հայ Առաքելական Եկեղեցու հետ:

Համաժողովի ընթացքում քննարկվեց Արեւելյան եւ Եվրոպական Եկեղեցիների հարաբերություններին, ժամանակակից Եվրոպայի ուղղափառությանը, Ուղղափառ եւ Կաթոլիկ Եկեղեցիների երկխոսությանը վերաբերող խնդիրների լայն շրջանակ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը համաժողովում ներկայացնում էին Գերմանիայի թեմի Հեսսենի շրջանի հոգեւոր հովիվ Սերովբե վրդ. Իսախանյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վարչատնտեսական բաժնի տնօրեն Մուշեղ աբեղա Բաբայանը եւ Բեռլինի հայ համայնքի ներկայացուցիչ տիկ. Սոնա Եուպպերը: Հայոց Եկեղեցու ներկայացուցիչները հանդես եկան նաեւ զեկույցներով:

*Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժին*

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ

## (ընդհանուր ակնարկ)

*Սկիզբը՝ թիվ 14-16*

Ահա Դավրիժեցու կերտած կերպարը. «Իսկ անդնդային վիշապ Շահ-Աբասը, որ հենց սկզբից օձաբար էր տրամադրված ընդդեմ քրիստոնյաների, երբ տեսավ սրանց այդքան հարստությունն ու բարեվայելչությունը, սիրտը մաղձով լցվեց... <...>: Այս օրերին շահը հրամայեց պարսից զորքին գնալ Արարատյան երկիրը եւ նրա բոլոր շրջակա գավառները, ամեն տեղից տղամարդիկ հանել, որ կոչվում է ժողովուրդ [ռայաթ] <...>: Այդ օրերին չարիք մտորելու մեջ հանճարեղ Շահ-Աբասը <...> հրամայեց Հայաստանի բոլոր բնակիչներին՝ թե՛ քրիստոնյա, թե՛ հրեա, թե՛ մահմեդական, քշել Պարսկաստան, որպեսզի օսմանցիները գան՝ երկիրը մարդկանցից թափուր տեսնեն, եւ չգտնեն ուտելիք ու օրապահիկ եւ այլ պիտույք նրանց եւ նրանց անասունների համար. եւ հարկավոր առարկաների չգոյության հետեւանքով օսմանյան զորքերը նեղվեն: <...>: Իսկ երկրների ավերիչը, քրիստոնյա ազգերի վատնիչը, սատանայի բնակարանը՝ Շահ-Աբաս թագավորը, չանսաց հայերի խոսքին» (Գ, Դ):

Ներկայացնում է, թե ինչպես Արարատյան դաշտավայրը՝ Գառնիի լեռներից մինչեւ Արաքս մեծ գետը լցված էր մարդկանցով ու անասուններով: Հրդեհում, ոչնչացնում էին ամեն ինչ, որ թե՛ տարագրվածները ետ չվերադառնան, եւ թե՛ թշնամին ոչինչ չգտնի: Պատմիչը ժամանակն այսպես է արձանագրում. «Հայոց թվականը նոր էր վերջացել, մտել էինք 1054 [1605] թվականի հայոց Նավասարդ [օգոստոսի 11 - սեպտեմբերի 11] առաջին ամիսը, երբ երկիրը տարագրեցին» (Դ): Ահա նաեւ տարագրությունը. «Իսկ թշվառ ժողովուրդը նայում իր առջեւ տեսնում էր ծովի նման անհուն գետը, որ խեղդում էր, իսկ ետեւից պարսից սուրն էր, որ սպանում էր, եւ փախուստի ոչ մի հնար չկար: Ընդհանուր կերպով աղիողորմ ողբեր, հորդ արցունքներ աչքերից թափելով՝ երկրորդ Արաքս էին գոյացնում, իսկ լացի, հառաչանքների, ճիչերի, վայերի, կսկծանքների, մորմոքների ձայները միմյանց խառնվելով՝ ուժգին գոռում-գոչյուններ էին առաջացնում, բայց ողորմածություն ու փրկություն ոչ մի տեղից չկային: <...> շատերը նրանք էին, որ ջրում խեղդվելով՝ մեռան» (Դ):



*Թորոս Ռոսլին*

Այս ընդհանուր ողբին հեղինակն ավելացնում է նաեւ իր ողբը, իր աչքերի արտասուքը, քանզի հայոց վայելչատես աշխարհն անազատ դարձավ...

Եվ այսպես էջ առ էջ Դավրիժեցին հյուսում է հայոց կյանքի այս նոր ողբերգության դրվագները: Ակնհայտ է, որ պատմիչ լինելով՝ նա նաեւ գրող է՝ օժտված գեղարվեստական խոսքի վարպետությամբ: Միայն գրողն այսպես կգրի. «Այնտեղ՝ Թավրիզում, չար մարդիկ իրենց սրտի չար մաղձից չար Թահմազղուլի բեկի մոտ չարախոսեցին Ջուղայի մասին...» (Ե):

Դավրիժեցու հետեւորդն էր **Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին** (1627-1699): Նա կրթություն է ստացել Հովհանավանքում, զբաղվել է ուսուցչությամբ: Հայտնի է իր *«Պատմությամբ» («Պատմութիւն»*, հհ. Ա, Բ, Գ, Վաղարշապատ, 1870): Ընդգրկում է 1734-1736 թթ. իրադարձությունները, որոնց կենտրոնում Նադիր շահի հաղթական պատերազմներն են Հարավային Կովկասում եւ նրա թագադրությունը: Հայոց կյանքն է, թուրք եւ պարսիկ հարաբերություններն են, բարքերը, կենցաղը, ազգագրական կազմը: Նրա գրքում զրույցը եւ առասպելախոսությունը եւս իշխող տեղ ունեն, եւ, ինչպես Դավրիժեցուն, այնպես էլ սրան Մ. Աբեղյանն ուղղում է իր քննադատական խոսքը:

17-րդ դարի հայ գրական կյանքի նշանավոր դեմքերից է **Երեմիա Քյոմուրճյանը** (1637-1695): Նա եղել է բանաստեղծ, մատենագիր, հոգեւոր գործիչ: Տիրապետել է թուրքերենին, ընդօրինակել է Նարեկը, 1677 թ. հիմնել է տպարան, որը գործել է երկու տարի, եւ ուր տպագրվել է երկու գիրք: Տպարանը նոր հիմքերի վրա է դրել Գրիգոր Մարզվանցին:

Գրել է տաղեր, ներբողներ, ողբեր, կատարել թարգմանություններ: Նրա պատմագրական աշխատություններից են *«Տարեգրական պատմութիւն»*, *«Համառաւտ պատմութիւն թագաւորաց օսմանցոց»* երկերը:

Առավել հայտնի է նրա *«Պատմութիւն համառաւտ ԴՃ տարիոյ օսմանցոց թագաւորացն»* (**Ե. Քեօմիւրճեան,** Պատմութիւն համառօտ ԴՃ տարիոյ օսմանցոց թագաւորացն, Ե., ԳԱ հրատարակչություն, 1982, աշխատասիրությամբ Ժ. Ավետիսյանի) գիրքը, որը չափածո պատմագրություն է՝ նվիրված Թուրքիայի 400 տարվա պատմությանը: Շարադրանքի սկզբում Օսման Ա-ն է (1299-1326), վերջում՝ Մուհամեդ Դ-ի իշխանության 30-րդ տարին (1678), ամբողջությամբ՝ 19 սուլթանի գահակալության պատմություն: Գրել է 1675-1678 թթ. եւ բաղկացած է 3622 տողից: Տողերը երկար են՝ 16 վանկանի՝ 8(4+4)+8(4+4) բաժանումով եւ գրված են միահանգ (*«եալ»*) հնչումով: Որպես պատմագրական երկ՝ իր ձեւով սա եզակի է: Գրել է վեհափառ հայրապետ Հակոբ Ջուղայեցու պատվերով եւ հանձնել նրան: Լեզուն գրաբարն է՝ տեղ-տեղ խճողված թուրքերեն բառերով, որոնց թիվն անցնում է 600-ից: Գրված է հայ եւ թուրք մատենագիրների երկերի պարունակած տվյալների, իսկ վերջին շրջանը՝ ականատեսների եւ իր դիտումների հիման վրա: Հեղինակը չի շրջանցել հայերի եւ ընդհանրապես քրիստոնյաների կյանքի ծանր ու ողբերգական պատմության էջերը: Սրանք արյունոտ պատմության էջեր են...

**Աբրահամ Կրետացին** (ծննդյան թվականն անհայտ է, մահացել է 1737 թ.) ապրել է Թուրքիայում, եղել է Թեքիրդաղ (Ռոդոսթո) քաղաքի թեմի առաջնորդը: 1734-ին ուխտի է եկել Էջմիածին, ուր եւ նրան ստիպելով հայոց վեհափառ հայրապետ են կարգել: Նրա գիրքը վերնագրված է *«Պատմագրութիւն անցիցն իւրոց եւ Նատր Շահին պարսից»* (Կալկաթա, 1796, Վաղարշապատ, 1870, Երեւան, 1973):

Գիրքը հուշագրական-ճամփորդական բնույթ ունի, որի մեջ նկարագրում է իր ուխտագնացությունները Երուսաղեմ, Էջմիածին, Խորվիրապ, Հավուց թառ, Հովհանավանք եւ այլուր: Պատմում է նաեւ այն մասին, թե ինչպես են իրեն պարտադրելով բազմեցրել Մայր Աթոռին, ինչպես է հանդիպել Նադիր շահին (Թահմազ Ղուլի խան), երեք օր հյուրընկալվել նրան, արժանացել նրա վստահությանը եւ պահպանել Էջմիածնին պատկանող կալվածքները:

Միջնադարի հայոց պատմագրության վերջին ներկայացուցիչը **Հովհաննես Սեբաստացին** է (մոտ 1760-ական թթ. - 1830): Եղել է Սեբաստիայի թեմի առաջնորդ (1809-1829), բարեկարգել եկեղեցիները, նոր հիմքերի վրա դրել կրթական գործը: 1812 թ. Եփրեմ վեհափառը նրան ձեռնադրել է եպիսկոպոս:

Գրել է բանաստեղծություններ, քառոգներ (*«Քարոզգիրք»*): Բանաստեղծությունների ժողովածուն տպագրվել է Ներսես Աշտարակեցու հրամանով (Ներբողական նուագերգութիւնք յօրինեալ ի սրբազան **Յովհաննէս արքեպիսկոպոսէ Սեբաստացւոյ**՝ յառաքելաշաւիղ առաջնորդէ աստուածապահ Սեբաստիայ քաղաքի, Թ., 1825): Նրա հիմնական գիրքը Սեբաստիայի պատմությունն է (Պատմութիւն Սեբաստիոյ, Ե., ԳԱ հրատարակչություն, 1974, աշխատասիրությամբ Բ. Չուգասզյանի), որի մեջ հայոց մատենագիրներից մինչեւ Մ. Չամչյանի եռահատոր պատմությունը ներառյալ փաստերի հավաքումով շարադրել է Փոքր Հայքի մայրաքաղաք Սեբաստիայի պատմությունը՝ սկսած 1021 թվականից, երբ Վասպուրականից ստիպողաբար հեռացած Սենեքերիմ Արծրունին հիմնադրեց առաջնորդանիստ Ս. Նշան վանքը, մինչեւ իր օրերը: Սա Հայոց եկեղեցու, հայ ժողովրդի, հայ-թուրք հարաբերությունների պատմություն է, որ ավելի գիտական, քան գրական-գեղարվեստական հետաքրքրություն ունի:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀՈՎՀԱՆՆԵՍ Է ԱՑԱԿԻՐ

## (1474-1484)

*Սկիզբը՝ էջ 3*

Նա կաթողիկոսեց մինչեւ 1493 թ.՝ ավելի քան 20 տարի: 1485 թ. Լեհաստանի Կամենից քաղաքում հիշատակվում է Հովհաննես կաթողիկոսը, սակայն հայտնի չեն նրա այնտեղ գտնվելու պատճառները: Մ. Օրմանյանը համաձայն չէ Հովհաննեսի՝ մինչեւ 1493 թիվը հովվապետելուն: Նրա կարծիքով՝ 1484 թ. Հովհաննեսը հրաժարվել է կաթողիկոսությունից, հետեւաբար նրա հովվապետությունը տեւել է 10 տարի:

Հովհաննես կաթողիկոսը, անցնելով Լեհաստան, տակավին կենդանի էր 1505 թ.: Մ. Օրմանյանը հակված է կարծելու, որ հենց Հովհաննես կաթողիկոսն է, որ Կոստանդնուպոլսում հիշատակվում է Սարգիս կաթողիկոսի եւ Դավիթ կրոնավորի հետ: Եվ նա է, որ իր ուղեկիցների հետ միասին նահատակվեց գլխատմամբ: Նրանք նահատակվեցին 1506 թ.:

Մի դեպքում Հովհաննեսը հիշատակվում է որպես կաթողիկոս, սակայն մեկ այլ դեպքում՝ որպես արքեպիսկոպոս: Դա պետք է բացատրել կաթողիկոսի պաշտոնավարությունը թողնելու փաստով: Ըստ որում, մեկ այլ տեղեկության համաձայն, հիշյալ անձինք նահատակվել են Ամասիայում: Միայն թե Հովհաննեսը հիշատակվում է լոկ որպես ազնվական եպիսկոպոս: Սակայն այս վերջին տեղեկությունը հաստատում չի գտնում այլ տեղեկությունների մեջ: Նշված անձինք ձերբակալվեցին եւ նահատակվեցին Պոլսում: Նրանք երեքն էլ չուզեցին մահմեդականանալ եւ ծանր տանջանքներից հետո գլխատվեցին 1506 թ. հոկտեմբերի 17-ին:

Այդ ժամանակներում հայտնի են նաեւ այլ նահատակների անուններ. երիտասարդ Ստեփանոս Կոստանդնուպոլսեցին (1471),Գրիգոր քահանայի որդի Դավիթ Խարբերդցին, որն ամբաստանվեց իր տաճկացած քեռայրից՝ իբրեւ թե իսլամը հայհոյելու համար. ձերբակալվեց, հրաժարվեց քրիստոնեությունն ուրանալուց եւ նահատակվեց սրախողխող լինելով (1474 թ. հունվարի 16), Սիրուն Հիզնացին կամ Հիզանցին, որի մայրը մահմեդականացել էր, եւ նրան էլ ստիպում են, որ իսլամ ընդունի, ինչին չհամաձայնվելով՝ խոշտանգվում է եւ անդամահատվելով սպանվում (1476 թ. հունվարի 14):

Հալածանքների ենթարկվածների մեջ առանձնանում է Ստեփանոս Տաթեւացի արքեպիսկոպոսը, ով Տաթեւի արքեպիսկոպոս Շմավոնի եղբորորդին էր: Նա կարողացել էր աղջիկ առեւանգած եւ մահմեդականացող մի տղայի ուժով ետ բերել քրիստոնեության եւ ապաշխարություն էր տվել նրանց մեղքին: 1477 թ.՝ Ուզուն-Հասանի մեռնելուց հետո, Խալիլ-Սոֆու կառավարիչը կամենում է թեկուզ ուշացումով վրեժ լուծել նրանից: Նա խաբեությամբ իր մոտ է հրավիրում Ստեփանոսին, որը նրա մոտ է գալիս քրոջ եւ քեռու որդիների հետ: Խալիլը նրան ուրացություն է առաջարկում, որից նա եւ նրա ուղեկիցները հրաժարվում են: Նրանք բանտարկվում են եւ ենթարկվում տանջանքների, եւ նրանցից երկուսը խաչվում են եւ խորովվում կրակի վրա: Այս ամենը կատարվում է Ստեփանոսի աչքի առաջ: Նահատակությունը եղավ 1478 թ.:



Ստեփանոս Տաթեւացին բանտարկության մեջ մնաց մեկ տարի, որից հետո նրա ատամները հանեցին եւ գանգին բեւեռեցին: Նա բանտում այնքան մնաց, մինչեւ վերքերն սպիացան: Հետո նա ենթարկվեց նոր խոշտանգումների. խանձեցին բոցերի վրա, գլուխը մեղրով ծածկելով՝ մաշկը վնասեցին եւ ընկույզի մեջ փակված սեւ բզեզները կապեցին գանգին, որ սրանք գանգը ծակեն: Այսպես նա տանջահար ապրեց հինգ տարի՝ նեղվելով նաեւ սովից ու ծարավից: Վերջապես Ստեփանոսի քույրը գնաց փադիշահի մոտ, բողոքեց այդ ամենից, եւ հուզված փադիշահը կարգադրեց Խալիլին՝ նրան ազատ արձակել: Սակայն Խալիլը չէր շտապում նրան ազատել, մինչեւ որ թագուհին ուժով նրան ազատել տվեց եւ ուղարկեց Տաթեւ: Այս դեպքերը կատարվեցին 1483 թ.: Մեկ տարի Տաթեւում կազդուրվելուց հետո Ստեփանոսն ուխտագնացության գնաց Երուսաղեմ եւ իր վերադառնալուց շատ չանցած՝ վախճանվեց 1485 թ.:

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# «ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ» ԵՎ ՄԱՐԴԱՂԱՎՆՅԱՑ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԸ



Սեւանա լճի արեւմտյան ափին՝ Կամո քաղաքից 12 կմ հյուսիս-արեւմուտք՝ Այրիվանք գյուղի տարածքում, ժամանակին լճի ջրերով ողողվող մի քարափնյա հրվանդանի վրա է գտնվում 9-10-րդ դդ. կառուցված Հայրավանքը՝ հայր Հովհաննու վանքը:

Այն հիմնովին նորոգվել եւ վերակառուցվել է 13-րդ դարի սկզբին: Պահպանված թվակիր հնագույն արձանագրությունը 1211 թվականից է եւ նվիրված է նորոգության աշխատանքներին: 1213 թ. մեկ այլ համաբնույթ արձանագրության մեջ վանքն արդեն անվանվում է Հայր Հովհաննու վանք. «Ի թվիս ՈԿԲ (1213) ես Համազասպս միաբանեցա Հայր Յոհանու վանիցս» (Դիվան հայ վիմագրության, հտ. VI, արձն հմ. 263): 1227-1250 թթ. միջեւ գրված մի արձանագրությունում էլ գտնում ենք նաեւ վանքի մյուս՝ Հայրավանք անվանումը. «...ի Հայրավանս...» (արձ. հմ. 294):

Լենկթեմուրի զորքերի Հայաստան արշավանքից հետո՝ 1380-ականներին, այս վանքն անվանվել է նաեւ Աղավնու վանք, իսկ այստեղ պահվող խաչափայտի սբ մասունքը՝ Մարդաղավնյաց սբ Նշան՝ համաձայն ժողովրդական մի ավանդության, որի առաջին ընդարձակ գրառումը գտնում ենք Ղազար Ա Ջահկեցու (կթղ. 1737-1751 թթ.) «Դրախտ ցանկալի» գործում (էջ 672-673): Այս ավանդությունը այնուհետեւ գեղեցիկ ու խորունկ մի նոր վերաիմաստավորման է ենթարկվում Հովհաննես Թումանյանի «Աղավնու վանքը» (1912 թ.) ստեղծագործությունում:

Աղավնու վանքի ավանդության առաջին գրառումը, ինչպես ասացինք, կատարել է Ղազար Ջահկեցին, սակայն գրելով, թե այս վանքը գտնվում է Սյունիքում: Վանքում պահվող Մարդաղավնյաց անվանվող սուրբ Նշանի մասին Ջահկեցին հիշատակում է «Դրախտ ցանկալիի» Հայոց աշխարհի սրբություններին նվիրված բաժնում՝ ասելով. «Այնտեղ է [Հայաստանում] եւ Սուրբ Նշանն Մարդաղավնյաց, որի շուրջը պատեց Լենկթեմուրը, երբ եկավ Սյունյաց երկիր, բանակեց գետի շուրջը եւ գերեց երկրի բնակիչներին»:

Այս գերյալներից մեկն էր Հովհաննես անունով եպիսկոպոսը: Այդժամ նա, վերցնելով սուրբ Նշանը, այն կապում է իր ուսին եւ նետվում գետը: Սուրբ Նշանի զորությամբ նա սկսում է ջրի վրա գնալ, ինչպես ցամաքին: Երբ այս տեսնում է Լենկթեմուրի զորքը, սարսափով լցվելով՝ զարհուրում է, եւ աղաղակ բարձրացնելով՝ երդվում, որ եթե ետ դառնա, նրան չի վնասի, այլ միայն կհարցնի, թե ինչի շնորհիվ է այդ սքանչելիքը:

Երբ եպիսկոպոսը գալիս է, հարցնում են, թե ով ես, եւ կամ ինչ է այդ նշանը, որ կա քեզ վրա: Եպիսկոպոսը պատասխանում է եւ ասում. «Այս հրաշքը եւ զորությունը սուրբ Նշանինն է, որ տեսնում եք եւ ոչ թե ինձնից»: Այդժամ Լենկթեմուրը զարմացմամբ ասում է. «Խնդրիր ինձնից ինչ որ ցանկանում ես»: Եվ բանակի դիմաց գտնվում էր մի փոքրիկ մատուռ, եւ խնդրում է եպիսկոպոսը, թե այն մատուռի չափ, որքան որ գերիներ կտանի, շնորհեք ինձ»: Եվ Լենկթեմուրն անհապաղ տալիս է: Եվ երբ գերիներն սկսում են մտնել մատուռը, այնժամ սուրբ Նշանի զորությամբ թեւ առնելով՝ աղավնակերպ թռչում են պատուհանից: Եվ երբ այլեւս ոչ մի գերյալ չի մնում, այնժամ ապշած զորքն ասում է. «Ինչպե՞ս այդքան փոքր մատուռը կարողացավ այդքան շատ գերյալներ տեղավորել իրենում»:

Եվ գնալով դեպ մատուռը՝ ոչինչ չեն գտնում այնտեղ, եւ իրար ձայն տալով՝ ապշանքով այս եւ այն կողմ որոնելով՝ գերյալներին տեսնում են գետի այն կողմում՝ մի տափարակ տեղում հավաքված: Եվ գալով պատմում են Լենկթեմուր բռնակալին: Եվ նա երկյուղից հրամայում է գնալ այն տեղից՝ ասելով. «Չմնանք այստեղ, գուցե կպատժվենք այն հրաշքից, որը տեսանք»:

Հաջորդը այս պատմությունը հիշում է Միքայել Չամչյանը: Նա եւս նշում է, որ այս հրաշքը տեղի է ունեցել Սյունյաց աշխարհում: Ինչպես ինքն է գրում. «Լենկթեմուրը գալով Սյունյաց երկիրը, բանակում է գետի երկայնքով եւ գերում այդ աշխարհի բնակիչներից շատերին, որոնց հետ գերվում է եւ մի եպիսկոպոս՝ Հովհաննես անվամբ: Նա, կամենալով փախչել գերիչների ձեռքից, իր ուսին է կապում մի հրաշագործ խաչ եւ իրեն նետում գետը եւ սբ Նշանի զորությամբ ընթանում ջրի վրա, որպես ցամաքի: Տեսնելով այս՝ Լենկթեմուրի զորքն ապշում եւ իրար է խառնվում, եւ աղաղակ բարձրացնելով՝ ձայնում են նրան՝ երդվելով, որ եթե ետ դառնաս, մենք ոչնչով քեզ չենք վնասի: Եվ եպիսկոպոսի՝ նրանց մոտ վերադառնալուց հետո տանում են նրան Լենկթեմուրի առջեւ, որը եւ հարցնում է եպիսկոպոսին, թե ով ես դու եւ ինչպես գործեցիր այդ սքանչելիքը: Իսկ եպիսկոպոսը պատասխանում է. «Իմը չեն սքանչելիքի այդ գործերը, այլ սուրբ Նշանինս»: Այնժամ Լենկթեմուրը, հիանալով եւ դիմելով նրան, ասում է. «Խնդրիր ինձնից ինչ որ կամենում ես, եւ կլինի քեզ»: Եվ եպիսկոպոսը, ցույց տալով իրենց հանդեպ գտնվող մատուռը, ասում է. «Ինձ շնորհիր այնչափ գերիներ, որչափ մարդիկ որ կտանի այն մատուռն»: Եվ Լենկթեմուրը հրամայում է, որ վարվեն համաձայն նրա խոսքերի:

Եվ երբ գերիներն իրար ետեւից սկսում են գնալ մատուռը, առաջինները, որ ներս են մտնում, այնտեղից աղավնու թեւ առնելով՝ թռչում էին պատուհանից, նույնպես եւ նրանք, որ ներս էին մտնում նրանց ետեւից, աղավնու նման թռչում եւ գնում էին, եւ այսպես երբեք չլցվեց այդ մատուռը, մինչեւ վերջացան բոլոր գերիները, ովքեր հույժ շատ էին: Իսկ Լենկթեմուրի զորքը, զարմացած տեղի ունեցածից, ասում էր, թե ինչպես մարդկանց այսչափ բազմությունը տարավ այն փոքրիկ մատուռը, եւ գնալով մատուռի ներսը՝ այստեղ ոչ ոքի չգտան եւ մինչդեռ այս ու այնտեղ որոնում էին, տեսան գերյալները գետի այն կողմում՝ մի հարթ տեղում, եւ գալով պատմեցին Լենկթեմուրին: Եվ նա, վախից զարհուրած, հրաման տվեց զորքերին գնալ այդտեղից, որպեսզի մեկ այլ հրաշքով որեւէ վտանգ չհասնի իրենց»:

*Շարունակությունը՝ էջ 7*

**Հայր Անատոլի ԲԵՐԵՍՏՈՎ**

**Բժշկական գիտ. դոկտոր**

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

*Զրույց երկրորդ*

*Սկիզբը՝ թիվ 13-16*

Քրիստոնեության ճանապարհին ուղղված է մարդու մեջ Աստծո պատկերը զարգացնելուն եւ Աստծուն փառաբանելուն: Քրիստոնեության ուղին մարդուն մեղքի գերությունից դեպի ազատություն տանող ճանապարհ է: «Ճանաչեք ճշմարտությունը, եւ ճշմարտությունը ձեզ կազատի» (Հովհ. Ը 32),- ասված է Ավետարանում: Իսկ Ո՞վ է ճշմարտությունը: Մեր Տեր Հիսուսն ասաց. «Ես եմ Ճանապարհը եւ Ճշմարտությունը եւ Կյանքը» (Հովհ. ԺԴ 6): Սա նշանակում է, որ միայն Աստծուն ճանաչելով է, որ պիտի ձեռք բերենք իրական ճանապարհը, ճանաչենք Ճշմարտությունը եւ Կյանք ունենանք, քանզի Աստծուց դուրս սրանք լինել չեն կարող: Իսկ ահա օկուլտիզմը տանում է մի ճանապարհով, ուր չկա Աստված, ուր չկան ո՛չ ճշմարտություն եւ ո՛չ կյանք:

«Ճանաչեք ճշմարտությունը, եւ ճշմարտությունը ձեզ կազատի»: Բայց ինչի՞ց պիտի ազատի: Մի՞թե մարդը կարող է ազատ լինել այս աշխարհում, աշխարհ, որն ամբողջովին ընկղմված է մեղքի ու չարի մեջ: Մարդն այս աշխարհում մշտապես ենթակա է իր վրա իշխող զանազան՝ բնության, կենսաբանական, ֆիզիոլոգիական, իրավական, սոցիալական, տնտեսական, բարոյական, հոգեւոր օրենքների ազդեցությանը: Եվ այդ օրենքներից ոչ մեկը, ըստ էության, իրավունք չունի խախտելու, այլապես նա պետք է խստորեն պատասխան տա դրանց համար:

Ուրեմն Ճշմարտության ճանաչումը ինչի՞ց է, որ պիտի ազատի մարդուն: Մե՛ղք գործելուց: Նշանակում է՝ Ճշմարտությունը, այն է՝ Աստծուն, ճանաչելով է մարդն ազատվում մեղք գործելուց: Հովհաննես Աստվածաբան առաքյալն ասում է. «Ամեն ոք, ով բնակվում է Աստծո մեջ, չի մեղանչում» (Ա Հովհ. Գ 6): Ահա թե ինչն է մարդու ճշմարիտ ազատությունն այս մեղավոր աշխարհում:

Մեղքից ազատվելով՝ մարդը հաղթում է իր բնությանը, այսինքն՝ կենսաբանության օրենքին: Մենք գիտենք, որ քրիստոնյա շատ-շատ



սրբեր չեն ամուսնացել, այսինքն՝ ապրել են լիակատար ժուժկալության մեջ, համարյա չեն քնել, չափազանց քիչ սնվել (օրինակ՝ օրը մի նշխարք կամ մի կտոր չորահաց): Քրիստոսով ապրած այս սրբերն իրենց ճգնավոր կյանքով հաղթահարել են «բնության կարգը»: Եվ այսպես՝ ճգնության, հավատի եւ Աստծո ու մարդկանց հանդեպ սիրո մեջ, «հաղթահարելով բնության կարգը», նրանցից շատերն Աստծուց շնորհ էին ստանում, զորություն, եւ այդ շնորհով էր, որ նրանք կարողանում էին բժշկել, կարողանում էին լինել պայծառատես, հրաշքներ գործել:

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՍՐԲԱԿԵՆՑԱՂ ԱՊՐՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԵ ՏԱՃԱՐԸ

*Սկիզբը՝ էջ 2*

Սբ Կույսն իրապես եղավ եդեմական երկրային դրախտ, որտեղից բխեց կյանքի Աղբյուրը՝ Հիսուս Քրիստոսը. եղավ նոյան տապան, որը պատճառ դարձավ ողջ տիեզերքի փրկության համար. եղավ անկեզ մորենի, քանզի Սբ Հոգու կրակը հպվեց նրա որովայնին եւ չբոցակիզեց. եղավ ուխտի տապանակ, որ կրեց անսահման Բանն Աստծուն՝ բոլոր ժողովուրդներին առաջնորդելով դեպի «վերին Երուսաղեմ». եղավ ոսկե սափոր, որը կրեց կյանքի Մանանան՝ Հոր միածին Որդուն. եղավ ծաղկյալ գավազան, որը տրտմածներիս ընծայեց ուրախության Ողկույզը՝ Քրիստոսին. եղավ գերարփի արեւելք, որտեղից ծագեց արդարության Արեգակը՝ հալածելու մեղքերի խավարը...

Երկրագնդի բոլոր կանանց միջից սբ Մարիամն ընտրվեց՝ որպես մաքուր անոթ Աստվածորդու մարդեղության համար: Իր կուսական անբասիր կյանքը, առաքինի վարքն ու աստվածահաճո ընթացքը եղան այդ ընտրության գրավականը: Եվ առաջին պատգամը, որ այսօր սբ Կույսից ճառագում է ամենքիս հոգիներում, մեր կյանքն ամենայն սրբությամբ, աստվածապարգեւ առաքինություններով եւ քրիստոնեական առողջ սկզբունքներով ապրելու կոչն է՝ արժանանալու համար երկնավոր Հոր որդեգրությանը, Աստվածորդու տեսությանը եւ Սբ Հոգու բնակությանը:

Սբ Մարիամ Աստվածածինը հայերիս ոգեկանության մեջ մասնավորաբար ընկալված է որպես տիպար մայր, որը ոչ միայն լույս աշխարհ է բերում իր զավակին, այլ նաեւ իր կյանքն է տալիս նրա համար: Հիշենք, թե ինչպես Տիրամայրը, ամեն ինչ մոռացած, փնտրում էր բազմության մեջ կորած պատանի Հիսուսին եւ չհանգստացավ, մինչեւ որ Նրան չգտավ տաճարում: Եվ ինչքա՜ն էր սրբուհին տառապում, ողբում ու տագնապում, երբ տեսնում էր իր սիրելի Որդուն՝ հրեաներից հալածված եւ անօրենների կողմից խաչված... Հայ ազգը տիպար մոր կերպարն այսպիսի վեհ պատկերացմամբ ըմբռնելով է, որ հայերենի ամենագեղեցիկ եւ ազնվագույն բառերից մեկը՝ «մայր»-ը, ընդելուզել է իր նվիրական սրբություններին, ինչպես Մայր Եկեղեցի, մայրենի լեզու, մայր հայրենիք, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Սիրելինե՛ր, սբ Կույս Մարիամը, մայր լինելով հանդերձ, միեւնույն ժամանակ մնաց հավերժական Կույս: Թերեւս այս երկու հասկացությունները՝ մայրություն եւ կուսություն, անհամատեղելի են մարդկային տրամաբանության համար, սակայն այն, ինչ անկարելի է մարդու համար, միանգամայն հնարավոր է ամենակարող Աստծո համար: Աստվածածնի անձով պատվվեցին թե՛ մայրությունը եւ թե՛ կուսությունը, քանի որ մեզնից յուրաքանչյուրը, ինչպես ասում է սրբազան Պողոս առաքյալը, իր շնորհն ունի Աստծուց՝ մեկն այսպես, իսկ մյուսը՝ այնպես... Սակայն Աստված պիտի դատի շնացողներին ու պոռնիկներին:

Սիրելի՛ հավատացյալներ, եկե՛ք, ուրեմն, հայցենք ամենասրբուհի Կույս Աստվածածնի հզոր բարեխոսությունը՝ հայ ընտանիքների ամրության, երկնային Տիրոջն անձանձիր ծառայության եւ մեր մեղքերի թողության համար:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին
Յիսուսի Քրիստոսի, եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն:

Կից սենյակում

# ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

## Մեր հյուրն է Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ ՀԲԸՄ հայորդյաց տների հոգեւոր տեսուչ Կոմիտաս վրդ. ՀՈՎՆԱՆՅԱՆԸ

*«Ինչպես կնիքն է դրոշմվում մեղրամոմի վրա, այնպես էլ երեխաների հոգում՝ այն, ինչ լսում են: Ընդ որում, նրանց կյանքը հենց այդ ժամանակից արդեն սկսում է հակվել կա՛մ արատին, կա՛մ առաքինությանը» (ս. Հովհ. Ոսկեբերան)*

**- Հա՛յր սուրբ, որքանո՞վ է կարեւոր մանուկների քրիստոնեական դաստիարակությունը, եւ ո՞ր տարիքից պետք է երեխայի հոգում հոգեւորը սերմանել:**

- Երեխայի դաստիարակությունն սկսվում է այն վայրկյանից, երբ կինը զգում է իր որովայնում ձեւավորվող նոր էակի գոյությունը, եւ հենց այդ պահից սկսվում է երեխայի դաստիարակությունը: Ըստ իս, դաստիարակությունը երեխայի հոգում ճիշտ մտածողություն ձեւավորելն է, քանի որ այսօր եւ անցյալում մենք՝ հայերս, ունեցել ենք դաստիարակության մեր յուրովի կերպերը: Անցյալում, երբ ընտանիքի բոլոր անդամները մի հարկի տակ էին ապրում, երբ իշխող էին եւ մեծ արժեք էին ներկայացնում տատի եւ պապի կերպարները, նրանց ներկայությունն ընտանիքում առանց խոսքերի առաջին բանախոսությունն էր նոր ձեւավորվող երեխաների համար, ովքեր իրենց աչքի առջեւ միշտ ունեին նրանց կյանքի ուսուցանող օրինակը: Այսօր կյանքը փոխվել է, եւ դժբախտաբար մենք չենք կարողացել որդեգրել դաստիարակության այն կերպը, որը կհամապատասխաներ 21-րդ դարին: Այսօր մերը թողած՝ փորձում ենք ընդօրինակել ուրիշին, վերցնել օտարինը՝ առանց հասկանալու, որ եթե ամերիկյան կրթությունը տասնամյակների կամ հարյուրամյակների կյանք ունի, ապա մեր կրթությունը հազարամյակների ճանապարհ է անցել: Այսօր մենք պիտի մտածենք, թե ինչ կերպ կարող ենք մեր ազգային դաստիարակությունը որդեգրել, ձեւավորել, ստեղծել՝ համապատասխան մեր ներաշխարհին, առավել եւս, եթե ուզում ենք երեխաներին քրիստոնեական դաստիարակություն տալ, որովհետեւ քրիստոնեությունը միայն հավատալը չէ, այն մտածելակերպ է, կենցաղավարություն, ավանդություն, բարոյականի ընկալում, մարդկային առողջ փոխհարաբերություններ: Ուրեմն քրիստոնեական դաստիարակությունը մարդու ճիշտ ձեւավորումն է, իսկ դա հնարավոր է իրականացնել այն դեպքում, երբ մենք ինքներս ենք օրինակ լինում երեխաներին՝ սովորեցնելով կյանքում ընթանալ ճիշտ ճանապարհով:

**- Հա՛յր սուրբ, մանուկներին քրիստոնեական ոգով կրթելու եւ դաստիարակելու գործում որքանո՞վ է կարեւոր ծնողների դերը:**

- Ծնողների դերը մեծ է, քանի որ մանուկի հոգում բարոյականություն կերտելու համար նախ ծնողները պետք է բարոյականություն ունենան: Ծնողները երբեք չպետք է կորցնեն եկեղեցու հետ իրենց կապը: Եկեղեցին մեր ծննդավայրն է, ինչպես Վ. Թեքեյանի հայտնի բանաստեղծության տողերում ենք կարդում. «Եկեղեցին հայկական ծննդավայրն է հոգվույս», ուստի կտրվելով իմ ծննդավայր-եկեղեցուց՝ ես կտրվում եմ իմ արմատներից: Չմոռանանք, որ այդ եկեղեցին է ձեւավորում մեր ազգային ներաշխարհը, մեր հոգեւոր դեմքն ու դիմագիծը, առանց որի ոչ ոք չի կարող քրիստոնեական ոգով սերունդներ դաստիարակել: Ուրեմն երեխաների բարոյական կերպարը ճիշտ ձեւավորելու համար նախ ծնողները պետք է լինեն դրա կրողը: Այսօր երեխան տեղեկատվություն ստանում է չորս հիմնական աղբյուրից. ընտանիքը, դպրոցը, փողոցը եւ լրատվական աշխարհը: Ճիշտ դաստիարակություն ստացած երեխան կկարողանա կյանքում ճիշտ կողմնորոշվել՝ հնարավորինս խուսափելով սխալ ընթացքից: Դժբախտաբար 21-րդ դարը մարդկանց միայն արտառոց երեւույթներ է մատուցում, իսկ մարդիկ, զուրկ լինելով առողջ տրամաբանությունից, չեն կարողանում տարբերել կարեւորը նվազ կարեւորից: Այսօր մենք երկու խնդիր ունենք՝ կառչած մնալ մեր արմատներին եւ պահել հազարամյակների խորքից եկած մեր ազգային դիմագիծը:



**- Մեր օրերում որքանո՞վ է հնարավոր դրա իրագործումը:**

- Հայը հայ է մնում՝ պահպանելով իր ավանդույթները, անցյալի արժեքները, սովորույթները, պատմությունը, հոգեբանությունը: Դրա համար պետք է միշտ արթուն եւ զգոն լինել, ինչպես Տերն է զգուշացնում. «Արթուն կացեք...» (Մատթ. ԻԴ 42):

**- Հա՛յր սուրբ, հնում բարեպաշտ քրիստոնեական ընտանիքներում երեխաների մտավոր եւ բարոյական կրթությունն սկսում էին Ս. Գրքի ուսումնասիրությունից, այսինքն՝ խիստ կարեւորվում էր Աստվածաշնչի նշանակությունն ի պետս երեխաների դաստիարակության: Ըստ Ձեզ, որքանո՞վ է կարեւոր կրթության այդ կերպը, եւ ի՞նչ ազդեցություն, ներգործություն կարող է ունենալ Աստծու խոսքը հասակ առնող փոքրիկի հոգու վրա:**

- Հին ու բարի ժամանակներում հայ ընտանիքներում օրն սկսվում էր Աստծով: Ընտանիքում հաճախ էին խոսում հոգեւոր թեմաներով, Ս Գիրքն ընթերցում: Հայ ընտանիքը յոթ-ութ հազարամյակ շարունակ պահել է բարության, ազնվության առողջ կենցաղավարությունը: Երեխայի դաստիարակության հիմքը Աստվածաշունչն էր, սուրբգրային ճշմարտությունները, որոնցով կրթվում եւ դաստիարակվում էր երեխան: Մեծ էր նաեւ կնքահոր դերը երեխայի հոգեւոր-բարոյական դաստիրակության գործում, որովհետեւ կնքահայրը փոքրիկի հոգեւոր ծնողն էր: Ցավոք, այսօր մեզանում փոխվել է կնքահոր դերը... Եվ վերջապես մեծ էր նաեւ հոգեւորականի դերը երեխայի նկարագրի կերտման գործում, որովհետեւ հոգեւորականը հոգեւոր հայր էր նրա համար: Ուրեմն երեխան պետք է ձեւավորվի այս «երրորդության» (ծնող, կնքահայր, հոգեւորական) հովանու ներքո: Դա է դաստիարակության ճշմարիտ կերպը:

**- Մեր օրերում շատ ծնողներ չեն կարեւորում իրենց զավակների հոգեւոր-քրիստոնեական կրթությունը՝ երկրորդականն ու ոչ կարեւորը առաջնային համարելով: Ավելին. շատերն էլ անգիտաբար զրկում են իրենց զավակներին աստվածային օրհնություններից՝ արգելելով եկեղեցի գնալ: Ըստ Ձեզ՝ որքանո՞վ է վտանգավոր այս երեւույթը եւ ի՞նչ հետեւանքներ կարող է ունենալ...**

*Շարունակությունը՝ էջ 8*

# ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 13-18-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ



*Սկիզբը՝ էջ 4*

**Գեղարվեստական արձակի յուրահատկությունները:** Պատմագրական այս աշխատությունները, որոնք ստեղծվել են 13-18-րդ դարերում, նաեւ գեղարվեստական արձակի նմուշներ են: Դրանք հավատարմորեն պահպանեցին 5-րդ դարի մատենագրության ավանդույթները եւ նոր ժամանակների պատմական դեպքերի արձանագրումով հանդերձ՝ շարունակեցին գեղարվեստական առասպելախոսության, զրույցի, իրադարձության գեղարվեստական նկարագրության ժառանգորդական յուրահատկությունները: Գեղարվեստականության նախադրյալն ազատ խոսքն է՝ բանարվեստի այնպիսի տարրերի համատեղումով, որպիսիք են չափազանցությունը եւ հրաշապատումը:

Միջնադարյան գեղարվեստական արձակն իր աշխարհիկ ուղղվածությամբ ի հայտ է գալիս տարատեսակ ձեւերով, որոնց մեկ բառով կարելի է կոչել *մանրավեպ*: Այնպես, ինչպես տաղ ասելով՝ հասկանում ենք գանձ, մեղեդի, փոխ, ներբող, գանձատ, պոեմ, այդպես էլ, *մանրավեպ ասելով, պետք է հասկանանք առակը, զրույցը, անեկդոտը, պատմվածքի կամ նորավեպի նմանվող մանրապատումը*: Դրան ավելացրած առասպելախոսությունն ու հրաշապատումը, որոնք պահպանվել են բազմաթիվ պատմիչների երկերում (Գանձակեցի, Օրբելյան, Դավրիժեցի, Քանաքեռցի, Կրետացի):

Կ. Մելիք-Օհանջանյանը միջնադարյան հայ արձակը խմբավորում է այսպիսի տեսակներով՝ «1. մանրապատումներ՝ առակ, պատմվածք, զրույց, անեկդոտ եւ այլն, 2. վկայաբանություններ (գլխավորապես ազգայինները), 3. հրաշապատումներ-հրաշագործություններ, 4. տեսիլքներ, 5. ապոկրիֆներ՝ պարականոն գրվածքներ: [Ապոկրիֆ (հուն. apokryphos) սկզբնապես նշանակել է «ծածուկ», «խորհրդավոր», «խորհմաց», «գաղտնի», հետագայում՝ «անկանոն», «անվավեր», «պարականոն»], 6. ներբողներ, 7. պերճախոսության նմուշներ, մասնավորապես՝ դրամատիզացիայի ենթարկված քարոզներ, 8. միստերիաներ, 9. խրատներ, խրախճանքներ եւ այլն, 10. «Պատմություն կտրիճին եւ աղջկան», 11. կենսագրական տեղեկություններ մեր հին ու միջին դարերի հեղինակների մասին (երբեմն ֆաբուլա ունեցող)» (Էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Ե., ԳԱ հրատարակչություն, 1957, էջ XII, ընդհանուր խմբագրությամբ **Կ. Մելիք-Օհանջանյանի**):

Վարքագրություններն ու սրբախոսությունները նա համարում է «կենսագրական վիպակներ եւ պատմվածքներ» (նույն տեղը, էջ XV), որոնց հերոսները քրիստոնյա նահատակներն են: Այսինքն՝ «Վարքագրությունը-սրբագրությունը կարելի է կենսագրական վեպի ժանրի հեռավոր նախորդը համարել» (նույն տեղը):

Գրական այս տեսակների մեջ ուշագրավ է տեսիլքի առանձնացումը: «Հրաշապատումների հետ սերտ առնչվում է տեսիլքը (visiones) - տեսիլային գրականությունը («ապոկալիպտիկա»)»,- գրում է Կ. Մելիք-Օհանջնյանը եւ այն բաժանում ենթատեսակների՝ ա) ճակատագրի սպասում. մեղավորներին՝ դժոխք, արդարներին՝ դրախտ, բ) մարգարեացում-կանխագուշակություններ, գ) արդարության վերագտնում անդրաշխարհում (նույն տեղը, XVIII):

Արձակից բացի, միջնադարյան թատերական արվեստի նմուշներ է նա համարում «պատարագային դրաման»՝ որպես ներկայացում, «տոնակատարություններին ենթարկված քարոզներն ու ներբողները» (նույն տեղը, XXI): Իսկ եկեղեցու պատերից դուրս՝ եկեղեցու գավիթում, գյուղերի հրապարակներում, գետափնյա հավաքատեղիներում ներկայացվել են «դրամատիզացիայի ենթարկված զանազան եկեղեցական ծեսեր ու խորհուրդներ» (նույն տեղը, XXI-XXII):

Սույն գրքի բնագրերի բաժնում զետեղված է 113 մանրապատում (հիմնականում առակներ եւ զրույցներ):

Միջնադարյան հայ արձակին են նվիրված նաեւ Ա. Սրապյանի (**Ա. Սրապյան,** Հայ միջնադարյան զրույցներ, Ե., ԳԱ հրատարակչություն, 1969), Մ. Ավդալբեգյանի (**Մ. Ավդալբեգյան**, Հայ գեղարվեստական արձակի սկզբնավորումը, Ե., ԳԱ հրատարակչություն, 1971) ուսումնասիրությունները: Ավդալբեգյանն անդրադառնում է 5-րդ դարում հայ գեղարվեստական արձակի սկզբնավորմանը՝ ուսումնասիրության նյութ ունենալով վարքերն ու վկայաբանությունները, պարականոնները եւ մատենագիրների երկերը՝ գեղարվեստի դիտարկումով: Սա այն հիմքն է, որի վրա հետագայում բարձրացավ միջնադարյան գեղարվեստական արձակը, եւ որի քննությանն էլ նվիրված է Ա. Սրապյանի ուսումնասիրությունը՝ նյութ ունենալով 13-18-րդ դարերում զարգացած զրույցի տեսակը: Գրքում զետեղված է նաեւ 124 բնագիր, մի մասը՝ *«Յաղագս ծիծաղական պատմութեանց»*:

Այս նյութերի մեջ ամբողջ ժողովրդի կյանքն է ու կենցաղը: Դրանք հստակ պատկերացում են տալիս այն մասին, թե ինչպիսին էր այդ ժամանակների հայ մարդը, ինչ հետաքրքրություններ ուներ, ինչ առնչություններ ուներ իր նմանի, եկեղեցու, աշխարհիկ պաշտոնյայի եւ օտարի հետ: Ի վերջո, այստեղ են հայ կինը, հայ տղամարդը, հայ ընտանիքը:

Գրավոր ավանդված այս տեսակները շատ դեպքերում ունեն բանահյուսական ծագում: Անկախ դրանից, առանձին պետք է տեսնել ու դիտարկել բանահյուսական այնպիսի տեսակի առկայությունը, որպիսին հեքիաթն է, ժողովրդի երեւակայության ամենաբարձր արտահայտությունը, եւ որի գանձերը հավաքված են *«Հայկական ժողովրդական հեքիաթներ»* բազմահատորյակի մեջ:

*Շարունակելի*

**Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ**
*Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

# ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ




*Քրիստոսի փակագիրը
"Энциклопедия символов",
Москва, 1998 գրքից*

Խոսքն Էջմիածնի Մայր եկեղեցու հյուսիսային պատի խաչ-աղավնի համադրությամբ քանդակի մասին է, որը հետազոտողներից շատերի ուշադրությանն է արժանացել, սակայն նրա հետ կապված մի շարք հարցեր (ժամանակ, գաղափարաբանական հենք, հունագրության արմատներ եւ այլն) դեռեւս հստակեցման կարիք ունեն:

Ուղղանկյունաձեւ քարի վերին միջնամասում պատկերված է հավասարաթեւ խաչ՝ առնված կլոր շրջանակի մեջ, որի երկու կողմում մեկական աղավնիներ են՝ խոնարհված դեպի շրջանակը: Ստորին մասում ուղղանկյուն եզրակալ է՝ ծայրերում ծիծեռնակապոչ (սեղանաձեւ) ելուստներով: Շրջանակից ներս հունարեն փորագրված է. «Օգնեա ամենայն աղօթողաց յեկեղեցւոջ», իսկ խաչի միջթեւային մասերում մաղթանք է: Շրջանակից դուրս՝ ձախ կողմում, գրված է. «Տէր, ողորմեա ծառայի քում Արքեա», իսկ աջում՝ «Տէր, ողորմեա Ելպիդեա»: Ներքեւի ուղղանկյան ներսում Դանիել, Տիրեր (Տիրայր) եւ Գարիկինիս (Գարեգին) անուններն են:

Ի՞նչ է խորհրդանշում քանդակը: Քանդակագործական արվեստում շատ տարածված է խորհրդանշանային պատկերագրությունը, որը հաճախ ունենալով հեթանոսական արմատներ եւ հիմնված լինելով հնագույն հավատալիքների ու պատկերացումների վրա՝ հանդես է գալիս զուգորդված քրիստոնեական ժամանակներում մշակված ձեւերի հետ՝ ստանալով նոր իմաստ եւ մեկնություն: Խորհրդանշանները ճարտարապետական կառույցների վրա հանդես են գալիս ամենատարբեր ձեւերով եւ հորինվածքներով՝ որպես պահապաններ, ամրության, հզորության, հաստատունության, հավիտենականության երաշխավորներ: Դրանք կապված են երկնային լուսատուների, տիեզերական պատկերացումների, պտղաբերման եւ այլնի հետ: Վիշապ-քարակոթողի, կենաց ծառի, հավերժության նշանի, ճաճանչավոր շրջանի, արեւի, աստղի եւ խորհրդանշանային մտածողության այլ գաղափարագրերի շրջանակում է նաեւ խաչը՝ խաչապատկերն իր բազմապիսի դրսեւորումներով (շրջանագծով եզերված կամ առանց դրա, հավասարաթեւ կամ անհավասար թեւերով, կեռխաչ եւ այլն): Խաչին գերբնական իմաստ է վերագրվել դեռեւս նախնադարյան ժամանակներից, ինչի մասին են վկայում Գեղամա լեռների Պայտասար գագաթի ստորոտի բազմաթիվ եւ բազմաթեմա ժայռապատկերները: *«Այն խտացնում է արեւի, հավերժության, կյանքի, չորս ուժերի, տարերքի, երկրի կողմերի, չորս տարրերի, շարժման, տարեղանակների փոփոխության, հավատարմության, պատվի, կենակցության, լույսի, փրկության, անմահության իմաստներ»* (Ա. Հայկազուն, Խորհրդանշանային մտածողությունը հայ ճարտարապետությունում, Ե., 2005, էջ 20): Սակայն Քրիստոսի խաչի վրա Վահին ընդունելուց հետո խաչը հռչակվեց որպես փրկագործության, մարդկության մեղքերի քավության եւ հավիտենական կյանքի նշանակ:

Աղավնին համաշխարհային մշակույթում, հնագույն ժամանակներից ի վեր, համարվել է խաղաղության, մաքրության, սիրո, խոնարհության եւ հույսի խորհրդանիշ, իսկ *«Հնագույն հասկացությունների մեջ թռչունի թեւերով հովանի անելը հովանավորելու, պաշտպանելու, հարգանք եւ պատկառանք ցույց տալու, հովանու տակ առնվածին երկրպագելու նշան է»* (Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակները IV-VII դարերում, Ե., 1949, էջ 62): Քրիստոնեության մեջ աղավնին հիմնականում կրում է Սուրբ Հոգու նշանակը: Երեւի դրա արձագանքն է ժողովրդական այն առածը, որ երբ մեկն արտակարգ հաջողություններ է ունենում, ասում են. «Աղավնին իջել է նրա ուսին» կամ՝ երբ աղավնու աղբը կաթում է մեկի վրա, ասում են. «Բարի բախտի է արժանանալու», այսինքն՝ ստացել է Սուրբ Հոգու հովանավորությունը:

Այժմ դառնանք Մայր եկեղեցու պատի քանդակին:

Խաչ-աղավնի զուգադրումը զուտ համաքրիստոնեական խորհրդանիշ է՝ սկզբնավորված դեռեւս քրիստոնեության վաղ շրջանից, որն էլ իր ուրույն տեղն է ունեցել նաեւ հայկական մշակույթում՝ քանդակագործության, որմնանկարչության, մանրանկարչության, ոսկերչության մեջ՝ տարբեր հորինվածքներով ու համադրություններով: Այն ժառանգորդաբար շրջանառվել է միջնադարի բոլոր փուլերում, նաեւ նոր ժամանակներում: Վ. Բաուերի, Ի. Դյումոտցի եւ Ս. Գոլովինի կազմած խորհրդանիշերի հանրագիտարանում՝ աղավնիների եւ խաչի համադրության նմանատիպ մի պատկերի տակ, կարդում ենք. *«Վաղ քրիստոնեության մեջ ամենահաճախ կիրառվող խորհրդանիշը, որը պատկերում է Քրիստոսի հավիտենական թագավորությունը... Երկու աղավնիները խորհրդանշում են Սուրբ Հոգին եւ աստվածային աշխարհը»*: Իսկ ահա հայ միջնադարյան արվեստի մեծագույն գիտակ, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Հովսեփյանը (1943 (օծ. 1945) - 1952), անդրադառնալով Էջմիածնի հյուսիսային պատին, Հավուց թառում, Աղցի ստորերկրյա դամբարանում, ինչպես նաեւ Արագածոտնի Ափնա գյուղի ավերակ բազիլիկի դռան ճակատաքարին պահպանված նմանատիպ հորինվածքներին, դրանք համարում է Քրիստոսի անվան փակագիրը (*Գ. Հովսեփյան*, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեւան, 1983 թ., էջ 56):

*Շարունակությունը՝ էջ 8*



*Օձունի գմբեթավոր բազիլիկ*

# «ԱՂԱՎՆՈՒ ՎԱՆՔԸ» ԵՎ ՄԱՐԴԱՂԱՎՆՅԱՑ ՍՈՒՐԲ ՆՇԱՆԸ

*Սկիզբը՝ էջ 5*

Այս ավանդության հաջորդ կարեւոր հիշատակությունը գտնում ենք Խաչատուր Աբովյանի մոտ: Աբովյանի բերած տարբերակը թեեւ ներկայացնում է այս պատմության առավել համառոտ շարադրանքը, սակայն այն կարեւորվում է կրկնակիորեն, քանի որ նրանում արդեն հստակ ասվում է, որ այս հրաշքը տեղի է ունենում Սեւանի ափին գտնվող վանքում, եւ այս հրաշքը ներկայացվում է Գեղարդավանքի հետ կապված մի սերտ կապակցության մեջ՝ որպես իրար հաջորդող երկու հրաշքներ, որոնցով առավել ընկալելի եւ համոզիչ է դառնում Լենկթեմուրին պատած սարսափը: Ինչպես ասվում է ավանդության այս տարբերակում, Լենկթեմուրը, «մտադրվելով կործանել եկեղեցիները եւ վանքերը, դիմում գնում է Գեղարդավանք, սակայն հասնելով գետեզրին՝ մյուս կողմում տեսնում է զորքերի անթիվ մի բազմություն, որը, սակայն, միայն ինքն է տեսնում, եւ Լենկթեմուրը հասկանում է, որ երկինքն է նրա դեմ դիմում, աղաղակում է. «Յոլ գէչ» (գնա հեռացիր), որի համար էլ վանքի անունը թաթարերեն մնում է Յոլ գէչ:

Այնտեղից ետ դառնալով՝ գնում է Սեւանա վանքը եւ այստեղ տեսնում է մի կրոնավորի, որը փիլոնը գցելով ջրերի վրա՝ գնում էր անվտանգ: Վախենալով այս հրաշքից՝ իր մոտ է կանչում նրան եւ պատվիրում օրհնել իր զորքերին եւ ասում է. «Խնդրիր ինձնից, ինչ որ եւ կկամենաս, եւ կտամ քեզ: Այնժամ կրոնավորը խնդրում է, որ որչափ գերիներ կտեղավորվեն վանքի փոքրիկ տաճարում, ազատ արձակվեն: Լենկթեմուրի զորքում կային անթիվ գերիներ, եւ բոլորը տեղավորվեցին տաճարում, որի համար ազատ արձակեց նրանց»:

19-րդ դարի 50-ական թթ. այս ավանդությունը լսել է նաեւ Սարգիս եպս Ջալալյանցը: «Ճանապարհորդութիւն ի Մեծ Հայաստան» գրքի երկրորդ հատորում (էջ 130) նա, բերելով Ջահկեցու պատմածը, այնուհետեւ վերջում կատարում է մի էական հավելում, որը բացակայում է այս ավանդության՝ իրենից առաջ եղած գրառումներում:

Ջահկեցին պարզապես գրում է, որ գերյալներն աղավնիներ դարձան ու թռան՝ առանց նշելու, թե ուր գնացին, իսկ Չամչյանի վկայակոչած տարբերակում, քանի որ հրաշքը Սյունիքում է տեղի ունենում, ասվում է, որ աղավնի դարձած գերյալները նորից մարդ են դառնում գետի մյուս ափին:

Ջալալյանցի պատմությունը, սակայն, կարեւորվում է նրանով, որ այստեղ նախ այս հրաշքը կատարվում է Սեւանում եւ երկրորդ՝ աղավնի դարձած գերյալները նորից մարդ են դառնում՝ հալածանքից թռչելով ու Սեւանա կղզում հավաքվելով:

«Տեղագիր Գեղարքունի ծովազարդ գավառի» (1896 թ.) հատորում Ջալալյանցի նման Սմբատյանցը եւս գրում է, որ Լենկթեմուրը, գնալով վանքը, տեսնում է, որ այնտեղ մտնող մարդիկ «աղավնո նման թեւավորված եկեղեցվո լուսամուտից դուրս են գալիս, եւ թռչելով ծովի երեսը՝ գնում են Սեւանա վանքի կղզու մեջ իջնում» (էջ 437):

Հայրավանքն ունեցել է նաեւ իր ուխտագնացությունը: Քանի որ վանքի նշանակալից սրբությունը եւ հրաշքը կապված են խաչափայտի սբ Նշանի՝ հետագայում Մարդաղավնյաց անվանված մասունքի հետ, վանքի ուխտագնացությունը կատարվում է Սուրբ Խաչի կիրակիին հաջորդող երկուշաբթի՝ մեռելոցին: Այս ուխտագնացությունը նկարագրել է Ս. Փիլոյանը՝ «Կորած մարգարիտը. Նոր Բայազետի կյանքից»՝ 1888 թ. Թիֆլիսում լույս տեսած փոքրիկ պատմվածաշարերի 15-րդ դրվագում, որը վերնագրված է՝ «Այրի վանքը եւ խաչերը»:

Հայրավանքի ուխտագնացության մասին Փիլոյանը գրում է. «Սուրբ խաչի մեռելոց երկուշաբթի օրն էր լուսանում, եւ տների մեջ դարձյալ իրարանցում կար: Գիշերով մեկը մյուսի փակած դռները ծեծելով «Վեր կացեք, լուս ա», կանչում էին. «Բոլորը գնացին, հետ մնացիք»: Ո՞ւր էին գնում: Նոր Բայազետից դեպի հյուսիս ծովի ափին մի կիսակործան վանք կա (ասա՝ ո՞ւր չկա): Ամեն տարի այսօր դեռ չլուսացած, շատերն էլ արեւածագի ժամանակ այս վանքն են լինում»:

Վերը բերված ավանդությունում ասվում է, որ սբ Նշանի մասունքը, որի զորությամբ հայր Հովհանը քայլել է ջրի վրա, ապա նրա շնորհիվ գերյալներին աղավնիներ դարձրել, Լենկթեմուրի արշավանքից հետո անվանվել է Մարդաղավնյաց, այսինքն՝ մարդկանց աղավնի դարձնող մասունք:

Համանման ձեւով ավանդության մի շարք տարբերակներում ասվում է, թե ի հիշատակ հայր Հովհանի կատարած հրաշագործության, այս վանքն այնուհետեւ անվանվում է Հայր Հովհանի վանք, որը պատմականորեն չի հիմնավորվում, քանի որ, ինչպես տեսանք, այն այսպես է անվանվել վանքի՝ դեռեւս 1213 թ. մի արձանագրության մեջ:

Նաեւ ինչպես տեսանք, ավանդության մի շարք տարբերակներում վանքը անվանվել է եւ Այրիվանք: Այս մասին «Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարանում» ասվում է, որ Հայրավանքից «մի կիլոմետր հեռու գտնվում է Սպիտակ ամրոց կոչվող կիկլոպյան ամրոցը: Ավանդության համաձայն՝ Հայրավանքը վերջինիս հետ կապված էր ստորգետնյա ուղիով եւ իբր այդ պատճառով էլ Հայրավանքը կոչվել է նաեւ Այրիվանք» (հտ. Գ, էջ 345):

Այս բերդի եւ Հայրավանքի միջեւ եղած կապի մասին Սմբատյանցը գրում է. «Այս բերդից՝ շինվածոց ավերակները տարածվելով դեպ հարավ, հասել են մինչեւ Հայրավանքը (Հայր Հոհաննու վանքը)»: Սմբատյանցը գրում է նաեւ, որ Այրիվանք է անվանվում եւ Հայրավանքի մոտակա գյուղը:

Արտաքուստ թվում է, թե **Հայրավանք** բառը կարող է լինել **Հայր Հովհան**-ի կրճատված եւ հնչյունափոխված տարբերակը, որը սակայն, կարծում ենք, այնքան էլ ճիշտ չէ: Ինչպես տեսանք, **Հայրավանք** բառը եւս վկայված է 13-րդ դարի առաջին կեսի մի արձանագրությամբ: Նաեւ նկատելի է, որ **Հայրավանք (Հայր Հովհաննու վանք)** եւ **Այրիվանք** բառերը սերտորեն իրար կապակցված են: Անգամ ավանդության մեջ Լենկթեմուրն Այրիվանքից առաջ ոչ թե մեկ ուրիշ, այլ հենց Գեղարդավանք է գնում, որը եւս մինչեւ 13-րդ դարի կեսերը կոչվում էր Այրիվանք:

Մեր կարծիքով, ելնելով **Այրի վանք - Հայրավանք** կապակցվածությունից, կարելի է ենթադրել, որ **Հայրավանք** բառը ծագել է ոչ թե **Հայր Հովհանի վանք** բառերից, այլ հենց **Այրիվանք** բառից, երբ գրաբարում՝ հոլովական ձեւերում եւ տարբեր կապակցություններում, նրան է միացել **ի** նախդիրը, որն **ա**-ից առաջ դարձել է **յ**՝ **յԱյրիվանք**, ապա կարդացվել **Հայրի վանք** եւ վերջապես դարձել **Հայրավանք**:

*Շարունակելի*

***Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու***

# ԽՈՐՀՐԴԱՆՇԱՆԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆ ՄԻ ՕՐԻՆԱԿ



*Աղցի Արշակունիների դամբարան*

*Սկիզբը՝ էջ 7*

Խորհրդանշանային՝ մեզ հետաքրքրող այս պատկերաքանդակն ավելի հին է, քան եկեղեցին: Ղազար Փարպեցու վկայությամբ՝ իշխան Վահան Մամիկոնյանը 483-484 թթ. եկեղեցին հիմնովին նորոգել է, որի ժամանակ էլ, ամենայն հավանականությամբ, տեղադրվել է քանդակը: Դա, բացի հնավանդ պատկերագրությունից (որ հատկանշական է քրիստոնեության առավել վաղ շրջանին՝ IV-V դդ.) եւ հունարեն վիմագրությունից (որ անտիկ դարաշրջանին մերձության վկայություն է), երեւում է նաեւ նրանից, որ քանդակի շրջանում պատի շարվածքը վերակառուցված է եւ հարմարեցված քարի չափերին, այսինքն՝ այն տեղադրված է հետագայում՝ պատի կառուցումից հետո:

Խորհրդանշանային քանդակները պաշտամունքային կառույցներում սովորաբար տեղադրվում են մուտքի երկու կողմում՝ բարավորի վրա, լուսամուտի պսակին՝ առավել տեսանելի եւ աչքի ընկնող տեղերում: Էջմիածնի Մայր եկեղեցու քանդակը, տեղադրված լինելով հյուսիսային՝ ոչ այնքան լուսավոր եւ արեւահայաց պատին, իր հերթին ցույց է տալիս հետագայում տեղադրվելը (արդեն գոյություն ունեցող շենքի մուտքի բարավորի վրա կամ պատուհանի գլխին պատկերաքանդակը չես տեղադրի): Բայց ինչո՞ւ հենց հյուսիսային պատին, ոչ թե՝ հարավային կամ արեւելյան: Դա բացատրելի է նրանով, որ հատակագծմամբ պայմանավորված՝ մարդկային հոսքը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարածքում հիմնականում կատարվում է Մայր եկեղեցու հյուսիսային պատի մոտով, ինչը եւ որոշիչ է եղել քանդակի տեղադրության հարցում:

Էջմիածնի Մայր եկեղեցու նույն պատում՝ նախորդ քանդակի ուղղությամբ՝ լուսամուտի մյուս կողմում, գտնվում է մեկ ուրիշը, որի կամարակապ զույգ խորշերից ձախում քանդակված է երկար զգեստով ֆիգուր՝ Թեկղե կույսը, իսկ աջում՝ ծալվող, հասարակ աթոռին նստած է երկար մազերով, ձեռքերը դեպի Թեկղեն պարզած Պողոս առաքյալը: Լ. Ազարյանը գտնում է, որ այդ քանդակը «նույնպես հնագույն պատկերագրական սխեմաներից է եւ հանդիպում է IV-V դդ., իսկ VII դ. հետո չենք տեսնում նույնիսկ բյուզանդական պատկերագրության մեջ: Դա, որպես այդպիսին, թերեւս միակն է Հայաստանում, հավանաբար թեման ներմուծված՝ ոչ տեղական երեւույթ է» (Վաղ միջնադարյան հայկական քանդակը, Ե., 1975, էջ 41):

Հավանական է, որ հյուսիսային պատի երկու քանդակներն էլ պատում տեղադրվել են միաժամանակ եւ նախապես պատկանել են նույն կառույցին:

Էջմիածնի Մայր եկեղեցու հյուսիսային պատի քանդակում խաչի եւ աղավնիների համադրվածքը դասական կատարելություն ունի: Այդ հորինվածքի հայտնի հնագույն օրինակներից են Աղցի Արշակունիների դամբարանի եւ Օձունի գմբեթավոր բազիլիկի հարավարեւմտյան մույթի պատկերաքանդակները: Աղցում հորինվածքը փոքր-ինչ այլ է. աղավնիները ոչ թե շրջանակից դուրս են, այլ ներսում՝ խաչի հորիզոնական թեւերին՝ նրանց հատման հանգույցին մոտիկ՝ իրար հանդիման դիրքով: Համադրության այս տարբերակն արդյո՞ք քանդակագործի անհատական մոտեցման արդյունք է, թե՞ գաղափարաբանական ինչ-ինչ առումով իմաստավորված լուծում, դժվար է ասել, սակայն դրանում ակնհայտ են խաչի եւ աղավնիների համադրության առավել կոմպակտությունը եւ օրգանական կապվածությունը: Խաչի ստորին կեսում՝ թեւի երկու կողմում, պատկերված են վեցաթերթ վարդյակներ: Խաչաթեւերի միացման չորս անկյուններից եւ խաչաթեւերի ծայրերից երկու կողմի վրա ելնում են վոլյուտաձեւ ոլորներ, իսկ վերին թեւի երկու կողմում ծաղկապտղային ավարտամասերով ցողուններ են:

Օձունի եկեղեցու հարավարեւմտյան գմբեթակիր մույթի հարավային կողմում՝ 3,5 մ բարձրության վրա՝ անկյունաձեւ զարդագծերով շրջանակում, պատկերված է հավասարաթեւ խաչ, որը ստորին կեսով առնված է նույնանման զարդագծերով ժապավենի թեւերի մեջ, իսկ վերեւում շրջանագծին հենված են գլուխ-գլխի տված բարետես նկարվածքով զույգ աղավնիներ՝ կտուցներին օղակաձեւ հատիկներ: Տեղադրված լինելով մեծ բարձրության վրա եւ եզրային նավի



*Սբ Էջմիածնի Մայր եկեղեցի*

թաղակիր կամարի ընդամենը 1 մ լայնությամբ բացվածքի կողմից՝ խաչապատկերը դիտելու համար գրեթե անմատչելի է: Դրա անհարմար տեղադրությունը, ձախակողմյան եզրից կտրված լինելը, ինչպես նաեւ հորինվածքային տվյալները հիմք են տալիս կարծելու, որ այն եկեղեցու կառուցմանը ժամանակակից չէ եւ նախապես պատկանել է մեկ այլ՝ առավել հին հուշարձանի (Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ եկեղեցու մույթերում տեղադրված այդ եւ մյուս հնավանդ քանդակապատ քարերը կարող են բերված լինել Օձունի Ծաղկավանք միանավ եկեղեցուց:

Ժամանակագրական առումով խաչ-աղավնի համադրությամբ բերված քանդակապատկերներից վաղագույնը, երեւի թե, Էջմիածնի Մայր եկեղեցունն է, այնուհետեւ՝ Աղցի դամբարանինը եւ ապա՝ Օձունինը:

Նույն բովանդակության եւ համադրության երեք տարբեր կոմպոզիցիոն լուծումներ են, սակայն որքա՜ն ճաշակ, խորհուրդ եւ յուրահատկություն կան յուրաքանչյուրում: Ստեղծագործական պոռթկումը, վերելքն ու նորամուծությունը բոլորում էլ նկատելի են՝ կատարված արվեստով, կատարելությամբ, իմաստալից՝ դրսեւորելով այն էականը, ինչ հատուկ է հայ ճարտարվեստին եւ պատկերագրությանը:

***Գառնիկ ՇԱԽԿՅԱՆ***
***Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր***

***Գծանկարները՝ հեղինակի***

# ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



*Սկիզբը՝ էջ 6*

- Ծնողը պետք է հասկանա, որ մարդը հոգեւոր էակ է, հոգուց եւ մարմնից է կազմված: Ցավոք, 19-րդ դարից սկսած շոշափելի դարձավ անաստվածության գաղափարախոսությունը՝ աթեիզմը, մարդիկ սկսեցին հեռանալ հոգեւորից՝ դառնալով նյութապաշտ, մոռացան Քրիստոսի խոսքը, որ ասում է. «Չեք կարող ե՛ւ Աստծուն ծառայել, ե՛ւ մամոնային» (Ղուկ. ԺԶ 13): Մինչդեռ հնում նյութապաշտական գաղափարախոսություն ունեցող հույն փիլիսոփաները տակավին ընդունում էին Աստծու գոյության փաստը: Մերօրյա մարդու կյանքի նպատակը դարձել են նյութը, հաճույքը, ավելին ունենալը: Այդպես չպետք է լինի: Այսօրվա ծնողներն անաստվածության 70 տարվա դաստիարակություն են կրում իրենց մեջ: «Մարդը ոչինչ է»,- քարոզում էր այդ գաղափարախոսությունը, հազարամյակների «ավանդության կաղնին» չորանում էր... Այսօր էլ շատ ծնողներ չեն ուզում, որ իրենց զավակները ծլարձակեն, Աստծով լուսավորվեն՝ չհասկանալով, որ առանց հավատի, առանց Հայ Առաքելական մեր Մայր եկեղեցու, որը 1700 տարի առաջնորդել է մեզ եւ պետականության բացակայության պայմաններում, ամեն տեսակ արհավիրքների ժամանակ, մեր գոյության միջնաբերդն է եղել, չենք կարող փրկություն ունենալ: Մենք իրավունք չունենք մեր Մայր Եկեղեցուց հեռանալու, մեր զավակներին Աստծու հետ հաղորդակցությունից զրկելու: Քրիստոսն ասում է. «Եթե չդառնաք ու չլինեք մանուկների պես, երկնքի արքայությունը չեք մտնի» (Մատթ. ԺԸ 3), որովհետեւ մանուկները բարության, անմեղության, մաքրության կրողներն են, եկեղեցում նրանք հաղորդակցվում են աստվածային զորության հետ, ցնծում հրեշտակների հետ:

Ուրեմն անգիտաբար չզրկենք նրանց աստվածային օրհնություններից: Հիշենք, որ հավիտենականությունն սկսվում է այստեղից, որին կարող ենք հասնել մեզ տրված կյանքը ճիշտ, քրիստոնեավայել ապրելով: Մտածենք մեր զավակների փրկության մասին, հատկապես նրանց մասին, ովքեր մոլորվել են ճշմարտության ճանապարհից՝ գնալով «սուտ մարգարեների» հետեւից: Ջանանք նրանց ուղղության դարձնել, քանի որ նրանցից յուրաքանչյուրի մեջ ապրում է Աստված: Ուրեմն քրիստոնեաբար դաստիարակենք մեր զավակներին, որպեսզի նրանցից յուրաքանչյուրը նախ այստեղ գտնի դրախտը՝ ըստ Տիրոջ խոսքի, որ ասում է. «Աստծու արքայությունը ներսում՝ ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ 21)՝ ձգտելով հասնել Աստծու խոստացված բարիքներին հավիտենությունում՝ երկնքի արքայության մեջ:

*Հյուրընկալեց*
***Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ***

## Հայր Անատոլի ԲԵՐԵՍՏՈՎ
### Բժշկական գիտ. դոկտոր

# ՄԵՂՔ, ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ, ԲԺՇԿՈՒՄ

*Սկիզբը՝ էջ 5*

Իսկ օկուլտիստները գնում են սրան միանգամայն հակառակ ճանապարհով, այն է՝ հատուկ մարզումների միջոցով՝ առանց մեղքերից մաքրելու իրենց մարմինն ու հոգին եւ կամ զարգացնում են իրենց գերբնական ընդունակությունները, որ առկա են ուզածդ մարդու մեջ, կամ էլ դրանք ստանում են դեւերից՝ ընծայման հատուկ ծիսակարգի միջոցով:

Առանց հոգեւոր որեւէ լարվածության, առանց բարոյական կատարելագործման՝ մարդը, ահա, անմիջականորեն ստանում է իր աշխատանքի պտուղները՝ բժշկություն անելու, ապագան կանխագուշակելու (պայծառատեսություն), իրադարձությունների վրա ազդելու, մարդու «ճակատագիրը փոխելու» եւ այլ հնարավորություններ:

Քրիստոնեության նպատակը ոչ թե գերբնական ընդունակություններ զարգացնելը կամ ստանալն է, այլ, ինչպես ասում է երանելի Սերաֆիմ Սարովսկին, Սուրբ Հոգին ստանալը: Քրիստոնեությունը «Քրիստոսով նոր արարած» (Պողոս առաքյալ) ստեղծելու ճանապարհն է: Օկուլտիզմում նման բան տեղի չի ունենում: Օկուլտիստները, բնականաբար, չեն գործում Աստծո շնորհներով, այլ միմիայն հոգեւոր բացասական էներգիայի, այն է՝ դեւերի աշխարհի միջոցով: Իսկ դա բերում է ծանր, շատ հաճախ նաեւ ողբերգական հետեւանքների:

Հոգեւորականներին եւ քրիստոնյա բժիշկներին քաջ հայտնի են էքստրասենսների, կենսաէներգետիկների ու կախարդների՝ մարդկանց «բուժելու» ողբերգական հետեւանքները: Եթե դրանք պարզապես խարդախներ չեն, այլ իրապես ճշմարիտ էքստրասենսներ, ապա նրանց դիմողները երբեմն կարող են որոշակի թեթեւություն զգալ, նույնիսկ բուժվել հիվանդություններից: Սակայն մի քանի ամիս, երբեմն՝ մեկ տարի անց (իմ դիտարկմամբ՝ 2-6 ամիս) հիվանդությունը վերադառնում է՝ այս անգամ առավել սաստկացած, եւ նրանց բուժելը դառնում է շատ ավելի դժվար. հաճախ ախտահարվում են նաեւ մյուս օրգանները եւ նույնիսկ առաջ բերում հոգեկան խանգարումներ:

Կարելի է հետամուտ լինել հետօկուլտական նման ախտանիշների՝ համակցված զարգացումների մի ողջ շղթայի. ժամանակավոր թեթեւացում, նույնիսկ բուժում, որի թաքնված շրջանը տեւում է մի քանի շաբաթից մինչեւ մեկ տարի (ավելի հաճախ՝ 2-6 ամիս), հիվանդության կրկնություն՝ նոր ուժգնությամբ եւ հաճախ նաեւ այլ օրգանների ախտահարմամբ, չպատճառաբանված վախի սուր զգացում (օրինակ՝ վախ մահվան, տրանսպորտի միջոցներից օգտվելու, հարազատների կյանքի հանդեպ եւ այլն), ինչ-ինչ, այն է՝ մարդու հոգեկան վիճակն ուղղորդող ձայների ի հայտ գալ, որը թելադրում է այս կամ այն բանն անել, դեպրեսիոն վիճակներ, որոնք տանում են ինքնասպանության շուրջ մտորումների, որոնք էլ, ցավոք, երբեմն ավարտվում են ողբերգական վախճանով:

Հաճախ, մանավանդ երեխաներն ու անհավատները, տեսնում են դեւերի, որոնք սարսափեցնում են իրենց եւ կամ հանձնարարում կատարել այս կամ այն արարքը: Մենք այսօր տիրապետում ենք նման դիտարկումների մի ստվարածավալ հավաքածուի:

*Շարունակելի*
***Թարգմ.՝ Ռ. ԱՐՈՅԱՆԻ***

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Համարի պատասխանատու՝**
Նարե Սարգսյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
17 09. 2009 թ.

**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**